Azg Ազգ

2 ԱՊՐԻԼ 1997, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ #61 (1315)

Լեոնիդ Կուչման դեմ է Ռուսաստանի ու Բելառուսի վերամիավորմանը

1 ԱՊՐԻԼ, BBC: Ուկրաինայի նախագահ Կուչման հայտարարեց, թե Ռուսաստանի եւ Բելառուսի ծրագրվող վերամիավորումը կարող է բանդել ԱՊՀ-ն: Դիտորդները հայտնում են, որ Ուկրաինան բերահավատորեն է վերաբերվում նախկին խորհրդային հանրապետությունների վերաինտեգրացման գաղափարին եւ ձգտում է դաշինք կազմել եվրոպական պետությունների հետ:

Մոսկվայում պայթեցրին Նիկոլայ Երկրորդի միակ հուշարձանը

1 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Մոսկվայում այսօր առավոտ պայթած մի ռումբ հիմնովին ոչնչացրեց Ռուսաստանի վերջին ցար Նիկոլայ Երկրորդի միակ հուշարձանը մայրաքաղաքում: Ոստիկանության խոսքերով, ռումբը տեղադրվել է մասնագետ մարդկանց կողմից: Նիկոլայ Երկրորդի հուշարձանը կառուցվել էր անցյալ տարի:

ՄՈՍԿՎԱ

«Հայ-ադրբեջանական բանակցությունները բարյացակամ մթնոլորտում եւ առանց ճնշումների»

1 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Երկար ընդմիջումից հետո Մոսկվայում այսօր վերսկսվեցին դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները: Հայ եւ ադրբեջանցի բանագնացները հանդիպումն անցկացնում են փակ դռների ետեւում: Բանակցող կողմերի կազմը փոփոխություն չի կրել. Ադրբեջանի պատվիրակությունը գլխավորում է փոխարտգործնախարար Թոֆիկ Զուլֆուգարովը, Հայաստանինը՝ արտգործնախարարի առաջին տեղակալ Վարդան Օսկանյանը, իսկ ԼՂՀ-ի շահերը ներկայացնում է արտգործնախարար Արկադի Ղուկասյանը: Բանակցությունների այս փուլում միջնորդների դերում հանդես են գալիս Ռուսաստանը, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը: Հենց այդ 3 երկրներն են ներկայումս համանախագահում դարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբում: Մ. Նահանգների ներկայացուցիչն է Ջոզեֆ Փրեսելը, Ֆրանսիայինը՝ Ժորժ Բոժյեն, Ռուսաստանը ներկայացնում է Յուրի Յուկալովը: Այսօրվա առավոտյան նիստում կողմերը հիմնականում զբաղված էին արարողակարգային հարցերի հստակեցումով: Նիստերի ընդմիջման ժամանակ, մեկնաբանելով բանակցությունների ընթացքը, Արկադի Ղուկասյանն «Ազատության» թղթակցին ասաց, թե դժվար է բանակցությունների առաջին տողերից մեկնաբանություններ անել: «Կարող եմ միայն ասել, որ աշխատում ենք բավականին բարյացակամ մթնոլորտում: Կողմերը գոնե խոսքերով կառուցողականորեն գործելու պատրաստակամություն են հայտնել: Առայժմ վաղ է խոսել արդյունքների մասին», հայտնեց ԼՂՀ-ի արտգործնախարարը: Ըստ Արկադի Ղուկասյանի, Մ. Նահանգների ու Ֆրանսիայի ներկայացուցիչների մասնակցությունը բանակցությունների այս փուլին պետք է ուժեղացնի համանախագահության դիրքերը. «Բնական է, որ բանակցություններում այդչափ հզոր տերությունների ներկայությունը պետք է դրական ներգործություն ունենա դրանց ընթացքի վրա: Ինձ թվում է, որ կաճեն թե կարգավորման մեջ շահագրգռվածությունը, եւ թե կարգավորման ընթացքի վրա ազդեցության չափը», ասաց ԼՂՀ-ի արտգործնախարարը: Այն հարցին, թե այս փուլում հայկական պատվիրակության վրա ճնշում գործադրվո՞ւմ է, Արկադի Ղուկասյանը հայտնեց, որ ճնշում, որպես այդպիսին իրենք չեն զգում:

Տես # էջ 2

ՈՒՇԱԴՐԱԳԱՂԱՔԱԿԱՆ

Որտե՞ղ են Ռուսաստանի իրական շահերը

«Նեզավիսիմայա գազետայի» փաստաթուղթը վախ է պատճառում վրացիներին

ՀԱԿՈԲ ՄՈՍԵՅԱՆ
Թբիլիսի-Երեւան

ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների հերթական գագաթաժողովի նախօրեին, «Նեզավիսիմայա գազետայում» հրապարակված անստորագիր զեկույցը դեռ երկար ժամանակ կմնա քաղաքագետների ու լրագրողների վեղուծության կենտրոնում: Առաջին հայացքից թվում է, թե այդ՝ կրճատումներով տպագրված փաստաթուղթը նպատակ ուներ ԱՊՀ գագաթաժողովից առաջ «անհնազանդ» երկրների ղեկավարներին ցույց տալ, թե ինչ քաղաքական ուղի կարող է ընտրել Ռուսաստանը:

Հրապարակման ազդեցությունը երկար սպասեցնել չտվեց: Վրաստանի նախագահը ժամանելով Մոսկվա, հայտարարեց, թե ինքը չի մասնակցի ԱՊՀ գագաթաժողովին, մինչեւ Ռուսաստանի արտգործնախարարությունը հպմտապատասխան հայտարարությամբ հանդես չգա: Եվ մինչ ՌԴ ԱԳՆ պատասխանական ներկայացուցիչ Կոնստանտին Տարասովը կանգ փաստաթուղթը ճնշադատող հայտարարություն, ԱՊՀ ղեկավարները Բորիս Ելցինի հետ հանդիպումից հետո վերանայեցին իրենց դիրքորոշումը: Դա հաստատեց նաեւ ՌԴ ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն Կոնստանտին Զատուլինը, որը երեկ ՌԴ նախագահական խորհրդի անդամ Անդրանիկ Միհրանյանի հետ հանդիպեց հայաստանցի լրագրողներին: Ու թեեւ նրանք հերքեցին այն պնդումը, թե իրենք են այդ զեկույցի հեղինակները, սակայն Զատուլինն ասաց, թե իր ղեկավարած ինստիտուտի «վեղուծությունները համահունչ են այդ հոդվածին, երբեմն նաեւ ավելի համարձակ»: Ընդ որում նա հայտնեց նաեւ, թե Բորիս Ելցինի ելույթում «ՆԳ»-ում հիշատակված գրեթե բոլոր առանցքային դրույթները կրկնվել են: Իհարկե, դժվար է կանխագուշակել, թե կոնկրետ որ դրույթներն է Ելցինը կրկնել, որից հետո նույնիսկ Նազարբաեւն այն համարել է վերջին 5 տարվա ամենաանկեղծ ելույթը: Բայց մի բան պարզ է. Ելցինը կատարել է հավատարակրողի դեր: Զեկույցի հրապարակումը նաեւ հասարակական կարծիքի զարկերակը չափելու նպատակ է ունեցել: Այդ առթիվ, Միհրանյանը երեկ նշեց նաեւ, թե «ռուսական քաղաքական վերնախավում տիրում է գերզգուշության մթնոլորտ եւ այն, ինչ նրանք պետք է ասեն կամ անեն բարձրաձայն, նախընտրում են փափսալ իրար ականջի: Այստեղից էլ արտաքին քաղաքականության մեջ նկատվող անորոշությունը» (մեջբերումն ըստ Արմենպրեսի):

Տես # էջ 2

Ֆրանսիայի արտգործնախարարն՝ այսօր Երեւանում

Կայծակնային այցի ընթացքում Էրվե դը Շարեթը կհանդիպի Հայաստանի ղեկավարներին

Տիգրան Լիլոյան
ՌՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար



Այսօր 6-ժամյա աշխատանքային այցով Երեւան կժամանի Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էրվե դը Շարեթը: Գալով հատուկ ինքնաթիռով Բաքվից, նա կհանդիպի Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանի, ՀՀ արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի հետ: Ֆրանսիայի նախարարը կայցելի Մայր աթոռ Սբ. Էջմիածին, ուր զրույց կունենա Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Գարեգին Առաջինի հետ:

Օրվա երկրորդ կեսին, Երեւանից Անկարա մեկնելուց առաջ, է. դը Շարեթը ճեղազրույց կտա հայաստանցի լրագրողների համար:

Ֆրանսիայի արտգործնախարարին ուղեկցող պատվիրակության կազմում են Ֆրանսիայի ԱԳՆ գլխավոր քարտուղարի տեղակալ, ԵԱՀԿ Մինսկի համաժողովի նախագահ ժակ Բլոն, ԱԳՆ մամուլի ու տեղեկատվության դեպարտամենտի տնօրեն, նախարարության խոսնակ ժակ Ռումելհարդը, նախարարի խորհրդական տիկին Սալոմե Զուրաբիշվիլին, Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչության ցամաքային եվրոպայի դեպարտամենտի փոխտնօրեն Ալեն Ռույաոը:

Ինչպես մեզ հայտնի դարձավ, Ֆրանսիական դիվանագիտության ղեկավարը Երեւանում կքննարկի Լեռնային Դարաբաղի կարգավորման եւ երկկողմ հարաբերությունների հիմնահարցերը:

Տես # էջ 3

Հայաստան-Վրաստան-Ադրբեջան. Տնտեսական հարցերը՝ հատուկ խորհրդաժողովում

ԵՐԵՎԱՆ, 1 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մարտի 31-ին Թբիլիսիում տեղի է ունեցել Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի պատվիրակությունների հանդիպում, որի ընթացքում քննարկվել են անդրկովկասյան տարածաշրջանի տնտեսական ներուժի առավելագույնս օգտագործման հարցերը:

«Կավկազպրեսս» գործակալության հաղորդման համաձայն, հանդիպման մասնակիցները նշել են, որ անդրկովկասյան պետությունների տնտեսական հարաբերությունների ինտենսիֆիկացման պայմաններից մեկը հակամարտությունների կարգավորումն է տարածաշրջանում, ինչը, նրանց կարծիքով, կազդի ոչ միայն տնտեսական զարգացման արագացման վրա հանրապետություններից յուրաքանչյուրում, այլեւ նրանց տրամադրվող միջազգային օգնության ակտիվացման վրա:

Հանդիպման ժամանակ որոշում է ընդունվել տնտեսական համագործակցության հասունացած բոլոր հարցերը քննարկել հատուկ տարածաշրջանային խորհրդաժողովում:

Եվրամիությունից Բաքվին վարկ՝ գրավյալ տարածքների վերականգնման նախագծին

ԲԱՔՈՒ, 1 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Բրյուսելում անցած շաբաթ ֆինանսական համաձայնագիր է ստորագրվել Եվրամիության կողմից 6,25 միլիոն ԱՄՆ դոլար հատկացնելու մասին՝ Ադրբեջանի գրավյալ տարածքների վերականգնման նախագիծը իրականացնելու նպատակով: Փաստաթուղթը ստորագրել են Ադրբեջանի կառավարության փոխվարչապետ Աբիդ Շարիֆովը ու TACIS եւ ԷԿՈ համաֆինանսական դեպարտամենտների ղեկավարներ Ֆրանսուա Լամորեն եւ Ալբերտ Նովարոն: Այդ միջոցները ենթադրվում է օգտագործել նախագծի իրականացման առաջին փուլում Հորադիսի վերականգնման եւ բնակ-սոցիալական օբյեկտների վերակառուցման համար:

Անօրինական ներգաղթյալների դեմ ուղղված ԱՄՆ-ի նոր օրենքը կասեցվեց

1 ԱՊՐԻԼ, BBC: Դատարանը Միացյալ Նահանգներում կարգադրեց կասեցնել անօրինական ներգաղթյալներին վերաբերող նոր, ավելի խիստ օրենքի ուժի մեջ մտնելը: Ըստ այդ օրենքի, սահմաններում հսկողությունը կուժեղացվի, ԱՄՆ-ից վտարելու գործողությունը կդարձնվի, ժամկետանց վիզաներով երկրում գտնվելու համար նախատեսված տուգանքները կմեծացվեն: Օրենքն ուժի մեջ պետք է մտներ այսօր, սակայն հետաձգվեց մինչեւ շաբաթ օր, քանի որ իշխանությունները հասարակայնությանը նախապես չէին նախազգուշացրել այդ օրենքի մասին: Ներգաղթյալներին օգնություն ցուցաբերող կազմակերպությունները հայտնեցին, թե կշարունակեն իրենց պայքարն ԱՄՆ-ի արդարադատության նախարարության դեմ, որպեսզի օրենքն ընդհանրապես վերացվի: Մեքսիկայում ԱՄՆ-ի նոր օրենքն անվանում են ռասիստական: Միացյալ Նահանգների իշխանությունների ներկայացուցիչ Կրիս Էյլը հայտնեց սակայն, որ օրենքը չի նախատեսում անօրինական ներգաղթյալների զանգվածային վտարում երկրից: Սակայն BBC-ի թղթակիցների վկայությամբ, այդ նոր օրենքը խուճապ է առաջացրել ԱՄՆ-ի անօրինական 5 միլիոն ներգաղթյալների շրջանում, որոնք փորձում են շուտափույթ ամուսնանալ Միացյալ Նահանգների օրինական քաղաքացիների հետ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հայաստանում մահապատիժ չի կիրառվի

Դրանով փորձ է արվում կրճատել Եվրախորհուրդ մտնելու ճանապարհը

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԺ-ի ապրիլի 1-ի նիստում 110 «կողմով» ընդունվեց ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը: Լուրջ առարկությունների արժանացավ առանձնապես մահապատժի հարցը: Մահապատիժ կիրառելու օգտին հանդես եկող պատգամավորները մատնանշում էին 2 հիմնական փաստարկ, առաջին հասարակության հոգեբանական անպատրաստվածությունը մահապատիժն օրենքից հանելուն, երկրորդ՝ առավել դաժան հանցատեսակները մահապատժի գոյությամբ կանխելը:

Միխայել Գրիգորյանը ՀՀ ԱՀ եւ ՆԳ նախարարության քննչական վարչության պետը եւ օրենսգրքի մասին հիմնական զեկուցողը, առարկելով վերոհիշյալ երկու փաստարկներին, նշեց, որ ոչ մի երկրում մահապատիժը չի հանգեցրել հանցագործության թվի կրճատմանը, ընդհակառակը, մահապատժի առկայության պայմաններում անգամ կատարվել են արյունալի հանցագործություններ: Բացի այդ, ըստ Գրիգորյանի, մահվան դատապարտված մարդկանց դատավճռի մահապատժի իրականացումը բացառում է դատավճիռը վերանայելու հնարավորությունը եւ հնարավոր սխալի ուղղումը: Գրիգորյանը հիշատակեց նաեւ Հայաստանի իրավիճակը, որ մահապատժի առկայության պայմաններում նվազել են դիտավորյալ սպանությունները: Գրիգորյանը նաեւ ժխտեց պատգամավորների այն փաստարկը, որ մահապատիժը օրենքից հանվում է «մոդային տուրֆ տալու» Եվրոպայի համակրանքին արժանանալու համար: Թեպետեւ ավելորդ չհամարեց խոստովանել, որ «որեւէ մեկին չի հաջողվել վերջնական դեղատոմս տալ այն հարցի լուծմանը, թե մահապատժի գոյությունը ճի՞շտ է, թե սխալ»: Գրիգորյանը ավելացրեց, որ մահապատժի իրականացումը «քաղաքական ակցիա չէ, այլ կապված է մարդու իրավունքների հետ»: Եվ քանի որ 1-ին ընթերցմամբ օրինագիծն ընդունվեց, ուրեմն կարելի է ասել, որ Հայաստանի օրենսդրությամբ մահապատիժ չի նախատեսվի, իսկ օրենքի նախագծի 2-րդ ընթերցումը կկայանա 3 ամիս հետո:

Երեկվա նիստում, բուռն քննարկումներից հետո վավերացվեց Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ զարգացման վարկի մասին համաձայնագիրը կնքված 1997 թ. հունվարին Վաշինգտոնում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱՍՈՒԼԻՍ

ՀՀՇ-ն նախարարական պորտֆելներ չի ակնկալում

Իսկ Տեր-Հուսիկը հայտնի տեսաերիզում Սիրադեղյանի՝ ՀՀՇ-ին ուղղված մեղադրանքներին վերաբերվում է հումորով

Մարտի 27-ին ՀՀՇ վարչությունը հայտարարություն էր հրապարակել, ուր զգուշացություն էր հայտնում Ռոբերտ Քոչարյանին, «կրկին հավաստելով կազմակերպության ամբողջ կազմը ու կարողությունները երկրի զարգացմանն ու հզորացմանն ի նպաստ ծառայեցնելու իր պատրաստակամությունը»: Այս հայտարարությունն առիթ էր ծառայել երեկ ապրիլի 1-ին, ՀՀՇ վարչության շենքում ասուլիս հրավիրելուն: Ասուլիսի սկզբում Տեր Հուսիկ Լանգարյանը հիշեցրեց, որ ՀՀ նախագահի հետ խորհրդաստվական հանդիպման ժամանակ «Հանրապետություն» միավորումն առաջ է քաշել վարչապետի պաշտոնը լուրջ եւ հայտնի քաղաքական դեմքին վստահելու տարբերակը: Տեր Հուսիկը նշեց, որ նոր վարչապետի հետ հանդիպելուց հետո միայն վարչությունը հանդես եկավ հայտարարությամբ, իսկ հանդիպման ժամանակ «Հանրապետություն» միավորումն առաջ է քաշել երկրում կարգապահության բարձրացման, քաղաքական ուժերի հետ համագործակցության եւ այլ հարցեր: Կանխելով հնարավոր հարցը Տեր Հուսիկը նշեց, որ ՀՀՇ վարչությունն, այո, պաշտպանել է Տեր-Պետրոսյանի առաջադրած բոլոր վարչապետներին, որպեսզի նախնարարաջ վարչապետներին աշխատելու հնարավորություն տվի: Քոչարյանին զգուշացնելու՝ ՀՀՇ վարչության քայլը Տեր Հուսիկը հիմնավորեց նրանով, որ դեռեւս 1992 թ. Քոչարյանը Ղարաբաղում կարողացավ բարդագույն հարցեր լուծել, իսկ դա, ըստ Տեր Հուսիկի, նշանակում է, որ «այսօր եւս նա քաղաքական ուժ եւ արիություն ունի» լուծելու Հայաստանի առջեւ ծառացած խնդիրները «համաձայնության դաշտում»:

Պատասխանելով լրագրողներից մեկի այն հարցին, ըստ որի տարաձայնություններ կա՞ն արդյոք ՀՀՇ-ում վարչապետի նշանակման խնդրի շուրջ, մասնավորապես նկատի ունենալով ՀՀՇ վարչության անդամ Արամ Մանուկյանի բավականին սառը դիրքորոշումը, Տեր Հուսիկը նշեց, որ Մանուկյանն իր անձնական տեսակետն է հայտնել, չնայած վարչությունը քաղաքական հայտարարություն է արել վարչապետի հետ հանդիպումից հետո միայն: Պատասխանելով ընդդիմության հետ երկխոսություն սկսելու մասին հարցին, Տեր Հուսիկը նշեց, որ արմատական ընդդիմության հետ ցանկացած երկխոսություն ողջունելի է, սակայն առանց նախապայմանների եւ առանց դարտադրանքի: Ինչպիսի՞ ներքին քաղաքական զարգացումներ է կանխատեսում ՀՀՇ վարչության նախագահը, ի պատասխան այդ հարցի, վերջինս նշեց, որ իր տրամաբանությամբ «ընդդիմությունը դրսում է աղրում», պատասխանատվություն չի վերցնում պետության կայացման համար եւ իրեն չի համարում պետության մաս: Ողջունելով «քաղաքական ցանկացած դայքար», Տեր Հուսիկը հույս հայտնեց, որ եթե անգամ քաղաքական զարունը տաք լինի, պայքարը դուրս չի գա անօրինականության շրջանակներից, քանի որ այդօրինակ իրավիճակներից միշտ շահող են դուրս գալիս անարժաններն ու որոշակի շահեր ունեցողները: Ինչ վերաբերում է դաշնակցությանը, ապա, ըստ Տեր Հուսիկի, այն շարունակում է մնալ «դրսի կուսակցություն» եւ չի դառնում «ներսի կուսակցություն»:

Ակնկալո՞ւմ է արդյոք ՀՀՇ-ն նոր կաբինետի ձեւավորում կամ զոնե կադրային փոփոխություններ, ի պատասխան մեր այս հարցի, ՀՀՇ վարչության նախագահը նշեց, որ «կաբինետի հարցադրում մենք չենք դրել», թեպետ եւ չի բացառվում, որ «մի վարչապետի նշանակումները մյուսին ձեռք չտան» եւ կատարվեն կադրային փոփոխություններ: Տեր Հուսիկը միաժամանակ ավելացրեց, որ իրենք դեմ չեն գործադիր իշխանության լծակներ ստանձնելուն, եւ պատասխանատվություն վերցնելուն, թեպետ այդ խնդիրը իրենց համար «գերակա չէ»: Հնարավո՞ր է արդյոք, որ որոշ տնտեսական-քաղաքական զարգացումներից հետո, 3-6-9 ամիս հետո կամ նոր բյուջեն ձեւավորելիս ՀՀՇ-ն հայտարարի, որ ներկա կաբինետը չի իրականացրել «Հանրապետություն» միավորման ծրագիրը, ի պատասխան մեր այս հարցի Տեր Հուսիկը նշեց, որ միավորումը պատրաստվում է վերանայել իր նախընտրական ծրագիրը, իսկ այս տարվա բյուջեի վերանայումը տարվա կեսից իրատեսական չի համարում, եւ ավելի ճիշտ է համարում աշխատել մյուս տարվա բյուջեի վրա:

Պատասխանելով լրագրողի հարցին, ըստ որի ինչպե՞ս է վերաբերվում Տեր Հուսիկը հանրահայտ տեսաերիզում Վ. Սիրադեղյանի՝ ՀՀՇ վարչության հասցեին ուղղված մեղադրանքներին եւ ինչո՞ւ մեկնաբանություններ ցայսօր չի տվել, Տեր Հուսիկը պատասխանեց, որ մեկնաբանություններ չեն տվել, քանի որ այդ մեղադրանքներին ինքը վերաբերվում է հումորով:

Լրագրողները տեղեկացան, որ ՀՀՇ հերթական համագումարը նախատեսվում է հունիս-հուլիս ամիսներին, քանի որ առջեւում դեռ նախապատրաստական աշխատանքներ կան, մասնավորապես կանոնադրական փոփոխությունները դեռ պետք է քննարկվեն: Ինչպիսի՞ն է ներկուսակցական մթնոլորտը, ի՞նչ հաճախականությամբ են գումարվում վարչության նիստերը եւ ի՞նչ թվակազմով, մեր այս հարցին պատասխանելիս Տեր Հուսիկը նշեց, որ նիստերը գումարվում են կանոնադրության համաձայն, ամիսը նվազագույնը երկու անգամ, կան մարդիկ, որոնք չեն մասնակցում այդ նիստերին:

Ինչ վերաբերում է ներկուսակցական մթնոլորտին, ապա, ըստ վարչության նախագահի, «ՀՀՇ-ն երբեք համասեռ չի եղել», այսօր այդպիսին չէ, քանի որ «համասեռությունը զարգացման վերջն է»:

Իսկ ինչ վերաբերում է Արաբկիրում կառուցվող իր առանձնատան մասին հարցին, Տեր Հուսիկը նկատեց, որ «տուն կառուցելը վատ բան չէ», իսկ այդ շենքը 1952 թ. է, ունի 12 բնակարան, այն վերակառուցում են 2 ընկերով: Բացի այդ Տեր Հուսիկը այդ շենքի կառուցման համար չի օգտագործել «անձնական դիրքը, կուսակցության միջոցները» եւ ոչ էլ օգտվել է բյուջեից: Ընդհանրապես, դա անօրինակ փողերով կառուցվող տուն չէ: Տեր Հուսիկը մինչեւ անգամ խոստացավ վերակառուցումից հետո այնտեղ մաքուր ասուլիս հրավիրել:

Իսկ մինչ այդ մամլո ասուլիսը հարկ ենք համարում մի քանի նկատառում հայտնել երեկվա ասուլիսից. ա) կառավարությունում կադրային փոփոխությունների եւ ՀՀՇ-ին պորտֆելներ տալու մասին խոսելիս ՀՀՇ վարչության նախագահը այնքան անկամ, տխար տոնայնությամբ եւ ձեւակերպմամբ էր ասում, որ առնվազն զարմանք էր հարուցում իշխող քաղաքական կուսակցության ակնհայտ վեհերոտությունը եւ կամքի իսպառ բացակայությունը, բ) «քաղաքական հայտարարություն» անելով վարչապետին զգուշացնելու մասին, ՀՀՇ վարչությունը մոռանում է, որ որպես քաղաքական կուսակցություն որեւէ հայտարարությամբ չի արտահայտել իր դիրքորոշումը հանրապետության ներքաղաքական, տնտեսական, իրավական կյանքի շուրջ, գ) այս ամենի հետեւանքով ՀՀՇ-ն վաղուց արդեն հայտնվել է քաղաքական կոմայի մեջ:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռ. Քոչարյանն ընդունեց Ռուսաստանի, Իրանի եւ ԱՄՆ-ի դեսպաններին

Ինչպես տեղեկացնում են ՀՀ վարչապետի գրասենյակից, վարչապետ Ռոբերտ Քոչարյանը երեկ հաջորդաբար ընդունել է Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Ուռնովին, Իրանի դեսպան Համիդ Ռեզա Նիֆար էսֆահանիին եւ Մ. Նահանգների դեսպան Պիտեր Թոմսենին: Վարչապետ նշանակվելուց հետո հիշյալ երկրների դեսպանների հետ իր առաջին հանդիպումների ընթացքում Ռ. Քոչարյանն ընդունել է նրանց շնորհավորանքները, զրուցել տվյալ երկրների հետ Հայաստանի տնտեսական եւ քաղաքական հարաբերությունների զարգացման մասին: Խոսակցություններում արծարծվել է դարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը առնչվող հարցերի մասին: Ռուսաստանի դեսպանի հետ հանդիպման ընթացքում կարեւորվել է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ նոր մեծ քաղաքական համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաեւ Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի վավերացումը:

Այնուհետեւ, վարչապետ Ռ. Քոչարյանի մոտ անցկացվել է խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանի մարզերի հետ կապված օրենսդրական եւ տնտեսական խնդիրների շուրջ: Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաեւ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ընթացքը, ոռոգման ջրի մատակարարման հետ կապված հարցեր:

... եւ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչներին

Վարչապետ Ռոբերտ Քոչարյանը հանդիպեց Հայ հեղափոխական դաշնակցության բյուրոյի անդամներ Մարտուն Մաթեւոսյանի, Կարո Արմենյանի, Թաթուլ Օհանյանի, Մկրտիչ Մկրտչյանի եւ Մասիս Բաղդասարյանի հետ:

Նրանք շնորհավորեցին Ռոբերտ Քոչարյանին՝ հանրապետության վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ եւ պատրաստակամություն հայտնեցին ըստ ամենայնի աջակցելու կառավարության գործունեությանը:

Կարեւորելով ներքաղաքական կայունությունը եւ ազգային համաձայնությունը, վարչապետ Ռոբերտ Քոչարյանը հավաստեց քաղաքական բոլոր կազմակերպությունների հետ համագործակցելու իր պատրաստակամությունը: Նա նշեց, որ ազգային համաձայնության քաղաքականությունն իր համար նոր սկզբունք չէ, դա իր համոզմունքն է: Այնուհետեւ Ռոբերտ Քոչարյանն անդրադարձավ հանրապետության ներքաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակին, Հայաստան-սփյուռք փոխհարաբերություններին, ընդգծեց, որ կուտակված հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն ազգային միասնականության պայմաններում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՐՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայ-ադրբեջանական բանակցությունները ...

Սկիզբը էջ 1

«Համանախագահության դիրքորոշումն արտահայտված է հստակ կերպով. հանգամանք, որը մենք ողջունեցինք բանակցությունների առաջին իսկ օրը: Այդ դիրքորոշումը հետեւյալն է. որոշումներ կայացնողները միայն կողմերն են լինելու, համանախագահները մտադիր չեն մասնակիցների վզին փաթաթել որեւէ պատրաստի բանաձեւ: Դա նշանակում է, որ փոխզիջումների փնտրումը միմիայն հակամարտ կողմերի գործն է լինելու», բացատրեց Արկադի Ղուկասյանը: Իսկ Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը հրաժարվեց մեկնաբանել բանակցությունների մեկնարկն՝ ասելով, թե առայժմ ասելիք չունի:

Հայտնի դարձավ նաեւ, որ Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելը ողջույնի ուղերձ է հղել Լեռնային Ղարաբաղի հարցով Մոսկվայում սկսված բանակցությունների հերթական փուլի կապակցությամբ եւ հավաստիացրել, որ իր երկիրը ակտիվորեն աջակցելու է այդ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացին:

Որտե՞ղ են Ռուսաստանի իրական շահերը

Սկիզբը էջ 1

Սակայն զեկույցի շուրջ կրքերի բորբոքումը ավելի հեռահար նպատակ ունի: Հարցերը, որոնք բխում են կատարվածից, մի քանիսն են: Նախ, այդ «հայանպաստ» զեկույցը որքանով է նպաստելու Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակին եւ ներքին ու արտաքին կայունությանը: Ջավախքի առնչությամբ արված առաջարկները արդյո՞ք Հայաստանի միջոցով հարեւան երկրին ուղղակի սպառնալիք ներկայացնելու մի ձեւ չեն: Եվ դա այն պայմաններում, երբ Ռուսաստանը մի կողմից Հայաստանին զենքի մատակարարման սկանդալային հրապարակումներ է թույլ տալիս, մյուս կողմից, Տեր-Պետրոսյանն ու Ելցինը «պայմանավորվում են մի նոր «մեծ» պայմանագիր ստորագրել», հայտարարելով ստրատեգիական համագործակցության մասին: Միաժամանակ, հակառակ զեկույցում ասվածին, ստորագրվում է ԱՊՀ ղեկավարների հայտարարություն, որում աջակցություն է հայտնվում Վրաստանի տարածքային ամբողջականությանը:

Ընդ որում, նույնիսկ այս հայտարարությունը չփարատեց վրացիների մտավախությունը, եւ այդ օրերին Թբիլիսիում վրաց քաղաքագետներն ու լրագրողները մեծ անհանգստություն էին ցուցաբերում: Շեւարդնաձեի մամուլի ծառայությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր, թե դա կայսերական մտածողության մի նոր փուլ է, իսկ «ՆԳ»-ի հոդվածը վիրավորական է ԱՊՀ երկրների, եւ նախեւառաջ Ռուսաստանի համար: «Սվոբոդնայա Գրուզիա» թերթի գլխավոր խմբագիրը ավելի առաջ գնալով նշում է, թե նմանատիպ առաջարկներից է սկսել նաեւ Հիտլերը եւ «նման ձեւով են սկսվում ոչ թե ռեգիոնալ, այլ համաշխարհային պատերազմները»: Վրացիները դեմ են նաեւ սիստեմատիկաբար թելադրվող ռազմաքաղաքական համագործակցությանը, համարելով, որ ապագան տնտեսական հարաբերությունների ակտիվության մեջ է: Թե այս ամենի մեջ ի՞նչ դեր կխաղա «հակառուսական առանցքը», դժվար չէ կռահել: Բայց միանգամայն է, որ այդ երկրների ադակայունացման միջոցով Ռուսաստանին ենթարկելու փորձերը ամենեւին էլ դրական դեր չեն խաղա Հայաստանի համար: Հայաստանը չի կարող գոյատեւել անկայուն երկրներով շրջապատված կղզյակում, հատկապես այն պարագայում, երբ ժամանակ առ ժամանակ Ռուսաստանը սկսում է իր իսկ շահերի դեմ քայլեր ձեռնարկել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Բարեգործական ճաշարան Մալաթիա-Սեբաստիայում

Երեկ Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքում նոր բարեգործական ճաշարանի բացումն էր: Բացման արարողությանը ներկա էին ՀՀ սոցպաշտպանության նախարար Հրանուշ Հակոբյանը, ԱԺ պատգամավորներ, լրագրողներ եւ այլ հյուրեր: Սոցպաշտպանության նախարարը շնորհակալություն հայտնեց Մալաթիա-Սեբաստիա տարածքային հանձնաժողովի ղեկավար Վահան Ջահուկյանին գործունեության համար եւ խոստացավ աջակցել: Բարեգործական ճաշարանը գործում է այսօրվանից, եւ այսուհետ նրա դռները բաց կլինեն համայնքի բնակիչների առաջ, ովքեր ունեն դրա պահանջը:

ՊՍԵՓՊԵՏՍՐՍԻ ԼՐՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ազատ է արձակվել սեպտեմբերի 25-ի գործով մեղադրյալ Վլադիմիր Մաթեւոսյանը

ԵՐԵՎԱՆ: 1 ԱՊՐԻԼ. ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 1-ին, ժամը 17.00-ին ազատ են արձակվել սեպտեմբերի 25-ի դեպքերի կապակցությամբ մեղադրյալ Վլադիմիր Մաթեւոսյանը եւ նրա ընկերներ Էդիկ Մուրադյանը ու Վալերիկ Հարությունյանը: Այս մասին «Նոյյան տապան» գործակալության թղթակցին հայտնեց իրավապաշտպան, ԱԺՄ վարչության անդամ Վովա Հախվերդյանը:

Վերոհիշյալ անձինք ձերբակալվել էին մարտի 24-ին ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների կողմից եւ պահվում էին ՀՀ զինվորական ոստիկանությունում:

■ *Ռուբեն Թորոսյանը ճշտում է: «Ազգի» ապրիլի 1-ի համարի «Մարտահրավերը նետված է» հրապարակման մեջ թույլ է տրվել անճշտություն. ԱԺԴ հիմնադիր համաժողովում Ռուբեն Թորոսյանը ներկայացրել է ոչ թե «96-սեպտեմբեր եւ Քաղաքացիական» հասարակական խորհուրդը, այլ «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբը:*

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՍԹԱԳԻԿ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Կ. Զատուլին. «Հայաստանը եղել եւ մնում է ՌԴ ստրատեգիական միակ դաշնակիցը Անդրկովկասում»

Երեկ ապրիլի 1-ին, Արմենիայի մամուլի սրահում Կոնստանտին Զատուլինը եւ Անդրանիկ Միհրանյանը հանդիպման էին հրավիրել լրագրողներին, որպեսզի «ներկայացնեն» ինչպես իրենց ընդհանուր մտքերը, այնպես էլ՝ Հայաստանի ներքին քաղաքական կյանքին վերաբերող կարծիքները: Նրանք Հայաստան են ժամանել Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից հանդիպումներ հայաստանյան ընդդիմության գործիչների հետ, եւ այդ բացը, ըստ Անդրանիկ Միհրանյանի, գործնականում հաղթահարվում է կանոնավոր կապի միջոցով, որը վաղուց արդեն առկա է իր եւ մեր ընդդիմադիրների միջեւ: Մասնավորապես, նա հարկ համարեց նշել, որ վերջերս Մոսկվայում հանդիպել է Շավարշ Քոչարյանի հետ, իսկ Վազգեն Մանուկյանի հետ կապերի ակունքը այնտեղ է, որ դեռ ներկայիս ընդդիմությունը եւ իշխանությունները կողմնորոշված էին միեւնույն ուղղությամբ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Կոնստանտին Զատուլինը իր խոսքում նշեց, որ Հայաստանը եղել եւ մնում է Ռուսաստանի միակ պաշտպանական եւ ստրատեգիական դաշնակիցը, տարածաշրջանում, եւ այդ հանգամանքը պետք է որ գործոն հանդիսանա ՌԴ ներկայիս իշխանության արտաքին դիվանագիտության ասպարեզում: Իրոք, եթե մի փոքր շեղվենք ասուլիսային ընթացքից, ապա ինքներս է համակերպվենք այն մտքի հետ, որ Ռուսաստանը ունի յուրահատկություններ, մասնավորապես ընդգրկելով ավելի քան 17 մլն քառ. կմ տարածք (համեմատության կարգով նշենք, որ զբաղեցրած տարածքով երկրորդը՝ Կանադան, «ընդամենը» 9,9 մլն քառ. կմ է), նրա գեոպոլիտիկական «տեղայնացումը» հնարավորություն չի տալիս «աշխարհի բախտի հետ խաղացող» տարածաշրջաններում ցուցաբերել սեփական ներուժը: Միակ մեղը, որը պատմական օրինաչափությամբ կամ պատահականությամբ «խրված է» նշված տարածաշրջաններից մեկի մեջ՝ Հայաստանն է: Այնուամենայնիվ, ըստ պարոն Զատուլինի, Տաբենդ-Բաքու-Թբիլիսի-Կիեւ ուղղությամբ ձգվող առանցքը նպատակ ունի էլ ավելի մեկուսացնելու Ռուսաստանը արտաքին աշխարհից եւ ակամա կարող է ազդել նաեւ ռուս-հայկական փոխհարաբերությունների ընթացքի վրա: Ընդ որում՝ ինքնըստինքյան պարզ էր, որ տվյալ դեպքում խոսքը փոխհարաբերությունների լայն ասպարեզի մասին էր, ինչպես պաշտոնական մակարդակներում, այնպես էլ՝ կենցաղային:

Այս համատեքստում Կոնստանտին Զատուլինը հայտնեց այն համոզմունքը, ըստ որի նույն Ուզբեկստանը կամ Ղազախստանը ժողովրդավարության այբուբենը սովորել են ռուսերեն եւ այս առումով անհասկանալի է եւ ոչ տրամաբանական վերը նշված առանցքի «ժողովրդավար» լինելու «կոչումը»: Պարոն Զատուլինի կարծիքով, անկախ Կրեմլում իրականացվող փոփոխություններից, Ռուսաստանի համար Հայաստանը միշտ էլ պետք է հանդիսանա միակ հուսալի դաշնակիցը: Այս առումով անդրկովկասյան «ինվենտարիզացիան» կապված ադրբեջանական նավթի գայթակղման հետ՝ միամտություն է:

Անդրանիկ Միհրանյանը իր խոսքով տեղեկացված չէ սեպտեմբերի 25-ին նախորդող եւ հաջորդող իրադարձություններին: Նրա ելույթը ավելի տարածաշրջանային բնույթի էր, քան տեղայնացված:

Կոնստանտին Զատուլինը եւ Անդրանիկ Միհրանյանը ռուս ազգային գաղափարների կրողներ են: Նրանք բացասական վերաբերմունք ունեն եւ Գրիգորի Յավլինսկու եւ ռուսաստանյան առավել ազդեցիկ հեռուստալիքների (ՕՐՏ, ՐՏՐ, ՀՏՎ) հանդեպ: Իրենց կարծիքով ինքնաստղի կեցվածք ունեցող լրագրողներ Դորենկոն (ՕՐՏ) եւ Կիսելյովը (ՀՏՎ) ավելի ուշ են հասունացել իբրեւ քաղաքացի, եւ սեփական դիրքորոշում արտահայտելիս խախտում են չգրված օրենքները: «Նեզավիսիմայա գազետայում» հրապարակված նյութի դեմ նրանց խոսքերը (հիշեցնենք, որ հոդվածը վերաբերում էր վերոհիշյալ «ժողովրդավար» առանցքին), ըստ պարոն Միհրանյանի եւ Զատուլինի, ստաբերներ են:

ԱԲԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՅԺ

Ֆրանսիայի արտգործնախարարն՝ այսօր Երեւանում

Սկիզբը էջ 1

Անցյալ տարվա հոկտեմբերի 9-11-ին է. դը Շարեթը պաշտոնական այցով եղել է Հայաստանում: Այն այցելության նախօրեին «Ազգի» համար Փարիզում մեզ տված հարցազրույցում նա ընդգծել է Հայաստանի հետ Ֆրանսիայի ունեցած «շատ սերտ ու հին բարեկամական կապերը»: Նախարարը նշեց, որ Ֆրանսիան շատ է հետաքրքրված մեր տարածաշրջանով: է. դը Շարեթը երկու երկրների հարաբերությունները որակեց «հրաշալի»: «Մեր համագործակցությունը մշակութային եւ գիտատեխնիկական բնագավառներում զարգանում է տարբեր ուղղություններով եւ թույլ է տալիս բազմապատկել մեր երկու ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող կապերը», ասաց նախարարը: Նա մաղթեց, որպեսզի նոր լիցք հաղորդվի հայ-ֆրանսիական տնտեսական հարաբերություններին: Ֆրանսիայի արտգործնախարարի կարծիքով, Հայաստանի ապագա զարգացման համար հրամայական է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումը: Դա բխում է Հայաստանի անվտանգության շահերից, հնարավոր կդարձնի հանրապետության ապաշրջափակումը, բխում է նրա դիրքից այս տարածաշրջանում, ուր կկարողանա բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարեւանների հետ, հայտարարեց է. դը Շարեթը:

Երվե դը՝ Շարեթը ծնվել է 1938 թ. հուլիսի 30-ին: Ավարտել է Փարիզի քաղաքական հետազոտությունների ինստիտուտը եւ կառավարման ազգային դպրոցը: Քաղաքական գործունեությունը սկսել է 1977 թ.՝ գլխավորելով Ֆրանսիայի այն ժամանակվա նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի հիմնադրած Հանրապետական կուսակցության հանձնաժողովներից մեկը: Մեկ տարի անց դառնում է կուսակցության գլխավոր պատվիրակ, իսկ 1979 թ.՝ կուսակցության գլխավոր քարտուղարի տեղակալ: 1986-88 թթ. վարչապետ Ժակ Շիրակի գլխավորած կառավարության անդամ է՝ որպես պետական ծառայության, պլանավորման եւ սոցիալական էկոնոմիկայի գծով պատվիրակ նախարար: 1989 թ. ընտրվել է «Հեռանկարներ եւ իրողություններ» ակումբի ազգային ֆեդերացիայի գլխավոր պատվիրակ: 1965 թ. Վ. Ժիսկար դ'Էստենի ստեղծած այդ կազմակերպությունը է. դը Շարեթը 30 տարի անց վերակազմավորեց ինքնուրույն քաղաքական շարժման, անվանելով Ֆրանսիայի ժողովրդավարության ժողովրդական կուսակցություն (ՖԺԺԿ)՝ գլխավորելով այն: է. դը Շարեթը փոխնախագահն է Ֆրանսիական ժողովրդավարական միություն (ՖԺՄ) կուսակցության, որի կազմի մեջ է մտնում ՖԺԺԿ-ն: Հիշեցնենք, որ ՖԺՄ-ն գոլիստական Հանուն հանրապետության միավորում կուսակցության հետ կազմում է իշխող աջ ցենտրիստական կոալիցիան, որը մեծամասնություն է Ֆրանսիայի խորհրդարանում: 1993-95 թթ. է. դը Շարեթը վարել է բնապահպանային շինարարության նախարարի պաշտոնը էդուար Բալադյուրի կառավարությունում: 1995 թ. մայիսին նշանակվել է արտաքին գործերի նախարար՝ վարչապետ Ալեն Ժյուպեի առաջին կառավարության մեջ: Ինչպես եւ ընդունված է Ֆրանսիայում, նախարարը միաժամանակ Սեն-Ֆլորան-լը-Վիեյի քաղաքապետն է: Այդ քաղաքում ավանդույթ են դարձել երաժշտության ու պարի փառատոները:

Հենդերային մոտեցումները ազգային քաղաքականության մեջ

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի եւ ՀՀ սոցիալական աջակցության նախարարության սրջեւ մարտի 17-ին ստորագրված համաձայնագրով տեխնիկական աջակցություն է նախատեսվում նախարարության կառույցում նոր ստեղծված հենդերային զարգացման բաժնին: Ինչպես տեղեկացանք ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի ծրագրերի պատասխանատու Անահիտ Սիմոնյանից՝ նորաստեղծ բաժնի խնդիրը ազգային քաղաքականության մեջ հենդերային մոտեցումների ապահովումն է:

Եռամյա ծրագիրն իրականացնելու նպատակով հենդերային զարգացման բաժնում աշխատելու են երկու հանձնախմբեր, որոնք կազմավորվելու են տարբեր նախարարությունների աշխատակիցներից եւ կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Հիշյալ՝ կառավարական եւ ոչ կառավարական հանձնախմբերն աշխատելու են առանձին-առանձին, ապա երկու ամիսը մեկ անգամ հանդիպելով՝ կհամաձայնեցնեն իրենց կատարած աշխատանքը: «Ծրագրի հիմնական նպատակն է հասարակական կազմակերպությունների ձայնը լսելի դարձնել պետական կառույցներում, ինչպես նաեւ ապահովել հասարակություն-կառավարություն երկխոսությունը», հայտնեց Ա. Սիմոնյանը:

Ըստ այդմ, սոցապնախարարության սոցիալական հետազոտությունների եւ զբաղվածության կենտրոնի հիման վրա ստեղծվելու է կադրերի վերապատրաստման եւ գիտահետազոտական աշխատանքի կենտրոն, որը կզբաղվի կադրերի վերապատրաստումով եւ հենդերային հարցերի հետազոտմամբ: Ծրագրի պատասխանատուի ասելով, կադրերի սկզբնական վերապատրաստումը կիրականացնեն ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի հրավիրած մասնագետները, իսկ հենդերային հարցերը հետազոտելու համար տեղի գիտական շրջանակներից կձեւավորվի գիտահետազոտական խումբ:

Ս. Պ.

Վկաները վկայում են, որ չեն տեսել ամբաստանյալներին

Երեկ ՀՀ Գերագույն դատարանում վերսկսվեց «Սեպտեմբերի 25/Ա» գործի քննությունը: Լսվեցին ԱԺ աշխատակազմի 5 անդամների՝ աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանի, Արա Սահակյանի խորհրդական Սամվել Հայրյանի, օգնական Էդուարդ Ավետիսյանի, պարեցի տեղակալ Խաչատուր Հովհաննիսյանի եւ միջազգային բաժնի խորհրդատու Արտակ Հակոբյանի ցուցմունքները: Վկաները հայտնեցին, թե չեն ճանաչում ամբաստանյալներին, եւ սեպտեմբերի 25-ի ժամանակագրությունը վերհիշելու նոր առիթ ընձեռեցին դատավարության մասնակիցներին:

Աշոտ Անտինյանը պատմեց, որ իր գնահատականներով 4-5 հազար, այլ աղբյուրներով 10-15 հազար ցուցարարների հայտնվելով սկզբում շատ չի մտահոգվել (նախորդ օրը նույնպես պատվիրակություն էր մտել ԿԸՀ): Սակայն Արտակ Սաղոյանի, Ալբերտ Բաղդասարյանի, Դավիթ Վարդանյանի ելույթներից հետո անհանգստացել է: Վերջինս, ըստ Անտինյանի, հստակ ասել է. «Տալիս ենք 15 ռոպե, եթե Վազգեն Մանուկյանն այդ ընթացքում դուրս չգա, ուրեմն ձերբակալված է, պետք է դիմենք կտրուկ քայլերի»: Նշանակված ժամկետից հետո Անտինյանը զնացել էր ԿԸՀ, Մանուկյանին առաջարկել դուրս գալ եւ հանգստացնել մարդկանց, սակայն իզուր: Նրա հետ ցուցարարներին ընդառաջ է գնացել Լենսեր Աղալովյանը, սակայն վերջինիս խոսքերն ընդունվել են սուլոցներով ու բղավոցներով: Հետո ճաղաբարը կոտրվել է, դարպասը բացվել, եւ ամբոխը խուժել է ԱԺ տարածք: Տեսնելով, որ հասարակական կարգի պահապանները չեն միջամտում, վերադարձել է ԿԸՀ եւ Մանուկյանին հայտնել, որ իր «ժամավախությունն լարեն տեսական չէ»: Նրա տպավորությամբ, այդ լուրը ոչ թե մտահոգել, այլ ոգեւորել է Մանուկյանին, եւ վերջինս ԿԸՀ նախագահին հավաստիացրել է, որ միայն համապատասխան որոշումը կսանձի ցուցարարներին: Բեզիրջյանը, սակայն, պատճառաբանելով իրավիճակի բացակայությունը եւ ուժային ճնշումը, ասել է, որ ԿԸՀ-ը որոշում չի կարող ընդունել: Երբ ամբոխը մտել է ԿԸՀ, Մանուկյանն ասել է. «Այստեղ սպասեք, մենք մոտենում ենք մեր նպատակին» (ոչ թե մի քայլեք, կամ հեռացեք, այլ սպասեք, նկատեց Անտինյանը): Բարձրանալով 3-րդ հարկ, Անտինյանը հայտնաբերել է նախագահի դատարկ, ավերված աշխատասենյակը, մի կերպ հավաքել աշխատակիցներին եւ պարզել ԱԺ ղեկավար այրերի «գլխով անցածը»:

Դատավորին հետաքրքրեց, թե արդյո՞ք դժվար էր կարգի հրավիրել 200 հոգու (սա, ըստ Անտինյանի՝ ԱԺ ներխուժածների մոտավոր թիվն է): «Հարցը ճիշտ հասցեով չեք տալիս», ասաց վկան, բայց ավելացրեց, որ իրավապահները, թերեւս, աշխատել են չգրգռել մարդկանց: Հասարակական պաշտպան Վովա Հախվերդյանը հարցրեց, Անտինյանը տեղյա՞կ էր, որ զինված մարդկանց մի խումբ առեւանգել էր ԿԸՀ անդամին (իրեն) եւ պատվիրակության երկու անդամներին: «Ոչ», եղավ պատասխանը: Ավետիք Իշխանյանը ճշտեց Անտինյանի ցուցմունքի իրեն վերաբերող մասը, որի համաձայն վկան ԿԸՀ դռների մոտ տեսել էր Իշխանյանին: Պարզվեց, որ ԱԺ վկան շփոթել է (նա ասաց, որ տեսել է, թերեւս, մյուս եղբորը՝ Վահան Իշխանյանին): Խուդոյանի հարցն առանցքային էր. «ԿԸՀ-ն ինչո՞ւ էր տեղավորված հենց ԱԺ տարածքում»: Անտինյանի կարծիքով, պատճառը սովորության ուժն էր՝ նախկինում ԿԸՀ-ն զբաղվում էր միայն ԱԺ ընտրությունների հարցերով:

Սամվել Հայրյանը հայտնեց, որ 25-ի բուռն իրադարձությունների ընթացքում աղաղակվել է «Անտինյան-ԿԸՀ-ԱԺ նախագահ-փոխնախագահ» տեղեկատվական ուղիները («Ես ասացի, նա ասաց, ես գնացի, նա գնաց» եւ այլն): Էդուարդ Ավետիսյանը, որի ցուցմունքները, կարելի է ասել, կորզվեցին դատավորի կողմից (վկան տարօրինակորեն չխոսկան էր), արձանագրեց, որ դեպքերի ամենաթեժ պահին կարգուկանոնի պահապաններից ոչ մեկին չի նկատել, իսկ պարեցի տեղակալ Խաչատուր Հովհաննիսյանի ցուցմունքներում ուշագրավ էր այն, որ խժդժությունների հենց սկզբից նա գործընկերների հետ թաքնվել էր իր աշխատասենյակում, որը լքել էր միայն աղմուկի «խախանդվելուց» հետո (այդպես ասաց Հովհաննիսյանը): Նա ժխտեց իր նախաքննական ցուցմունքների այն մասը, ըստ որի միլիցիայի աշխատակիցներն իրենց հետ են եղել: Պարզվեց, որ վերջիններս փախել էին... սեփական աշխատասենյակ: Վերջին վկան, էական ոչինչ չավելացնելով նախորդների ցուցմունքներին, նշեց, որ մարդիկ այնքան զբաղված էին, որ նույնիսկ Վազգեն Մանուկյանն ի վիճակի չէր հանգստացնել նրանց:

Այսպիսով, ոչ տուժողները, ոչ վկաները ամբաստանյալների մեղքը հաստատող որեւէ բան չասացին, եւ մնում է զարմանալ, թե ինչո՞ւ հենց նրանք են հայտնվել բանտերում «ԱԺ գրավումը» պատկերող տեսաժապավենների, թերեւս, ֆիքսված անձանց փոխարեն:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգային

Չեմքը ստրկությունից թեթև է

ԼՂՀ. Անկախությո՞ւն, թե՞ ինքնավարություն

Վերջին ժամանակներս, ավելի ստույգ նախանցյալ տարվանից, միջազգային տարբեր հանդիպումներում, բանակցություններում եւ զանգվածային լրատվամիջոցներում ադրբեջանական կողմը պատրաստակամություն է հայտնում «ամենալայն ինքնավարություն» տրամադրել «Ղարաբաղի լեռնային մասում բնակվող հայերին» կոչ անելով վերջիններիս ընդունումով զինաթափվել ու ետ քաշվել ռազմավարական հարմար դիրքերից: «Դուրս արի, Քիլլի, որ ֆեզ թաղենք», ամերիկյան կովբոյների հայտնի կատակերգի ոգով ձեւակերպված այս առաջարկության իմաստը հավանաբար հասկանալի է նախեւառաջ արցախցիներին, որոնց արդեն «բախտ» է վիճակվել վայելելու Ադրբեջանի կազմում ամենանեղ ինքնավարության «հանույքները»: Ուշագրավ է, որ ադրբեջանական ոչ մի պաշտոնյա չի շտապում բացատրել միջազգային հանրությանը լայն ու նեղ ինքնավարությունների միջեւ գոյություն ունեցող տարբերությունը, ըստ երեւույթին այն պարզ պատճառով, որ տարբերությունն առ այսօր հայտնի չէ նույնիսկ խենց՝ ինքնավարություն տրամադրողներին: Չգիտեմ ո՞րն է սկզբունքային տարբերությունը լայն ու նեղ գերեզմանների միջեւ, որտեղ փորձում են թաղել մեր ժողովրդի դարավոր հույսերը, կամ հայազգի ո՞ր դիվանագետի ձեռքը կբարձրանա ստորագրելու ԼՂՀ ինքնավարության մասին ինչ-որ մի բանաձեւ, սակայն գիտեմ, որ աշխարհում չկա ԼՂ Ադրբեջանի կազմ մտցնելու օրինականությունը հաստատող պատմա-իրավաբանական որեւէ փաստաթուղթ: Հավանաբար այս հանգամանքը հայ դիվանագիտության ամենահզոր ու համոզիչ փաստարկն է, իսկ պաշտոնական Բաքվի դիրքորոշման առավել խոցելի հատվածը: Օգտվո՞ւմ ենք մենք դրանից, թե՞ ոչ, դա արդեն այլ հարց է, որի մանրակրկիտ ուսումնասիրությամբ ու ամենաակտիվ քննարկությամբ պետք է վերջապես զբաղվեն մեր համապատասխան գերատեսչությունները:

Բնորոշ է, սակայն, մեկ այլ հանգամանք: Ջախջախիչ պարտություններ կրելով մարտի դաշտում, Ղարաբաղում Ադրբեջանի գաղութային լծի վերահաստատման ջատագովները բոլոր ժամանակներում դիմում էին ԼՂ ստրկացման ավելի նուրբ ձեւերին: Օրինակ, 1919 թ. մուսավաթական կառավարությունը եւ Շուշիում անգլիական առաքելության ղեկավար մայոր Մոնկ-Մոզեն առաջարկում էին երկրամասի բնակչությանը ժամանակավորապես, մինչեւ Փարիզի Խաղաղության կոնֆերանսի որոշումը, ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, պարտավորվելով չխոչընդոտել ԼՂ հայկական շրջանների միմիայն հայկական ընտրվի մարմինների վարչական ինքնակառավարմանը ու արգելել ադրբեջանական զորամասերի տեղաբաշխումը հայազգի բնակչություն ունեցող տարածքներում: 60-ական թթ. Ստեփանակերտում արյունահեղ բախումներից հետո ԼՂԻՄ-ի հայ բնակչությունն ստացավ մի շարք արտոնություններ (ռուսական դպրոցներում հայոց լեզվի դասավանդում եւ այլն): 1988-ին իրար հետեւից Ստեփանակերտ ժամանող ադրբեջանական էմիսարները խոստանում էին ԼՂ ինքնավար մարզին շնորհել ինքնավար հանրապետության կարգավիճակ, միայն թե արցախահայությունը հրաժարվի անկախության գաղափարից: Այսօր մեզ խոստանում են լայն ինքնավարություն ինքնակառավարման ամենաբարձր մակարդակով, սեփական զինված ուժերի, կառավարության, խորհրդարանի, նախագահական ինստիտուտի պահպանմամբ: Ինչպես ոչ հեռավոր անցյալում «Ազգ»-ի թղթակցին ասաց ԵԱՀԿ Մինսկի խմբում ՌԴ նախկին ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը, «իրականում Ղարաբաղը կլինի անկախ, սակայն փաստաթղթերում կմնա Ադրբեջանի կազմում»: Իսկ ժամանակ առ ժամանակ «թուլացող» հիշողությունը բարձացնելու ակնկալիքով վերհիշենք մի քանի վիճակագրական փաստեր ԼՂ շուրջ 70-ամյա գաղութացման պատմությունից: 1923–88 թթ. ԼՂ հայազգի բնակչությունը նվազել է մոտ 30 տոկոսով: Ադրբեջանական ԽՍՀ ԳԽ նախագահության 1990 թ. ապրիլի 21-ի հրամանագրով, ի խախտումն հանրապետության սահմանադրության ու ԼՂԻՄ-ի մասին օրենքի, սկզբունքային փոփոխություններ մտցվեցին երկրամասի վարչատարածքային բաժանման մեջ, որոնք ուղղված էին ժողովրդագրական իրավիճակի փոփոխմանը: 1923 թ.-ից մինչեւ 1986 թ. Ղարաբաղի ամբողջ բնակչությունն աճել է 19 հազար մարդով կամ 12 տոկոսով ամբողջովին ադրբեջանական բնակչության հաշվին, այն ժամանակ, երբ խորհրդային մյուս հանրապետություններում ինքնավար մարզերի բնակչությունն աճել է 60–300 տոկոսով: Հասկանալի է, թե այս միտումները դեռի ուր էին տանում մեր ժողովրդին:



ԼՂՀ-ին լայն ինքնավարություն տրամադրելու դեմքում Ադրբեջանը, անշուշտ, կխոսափի Արցախի նախիջեւանացման կոպիտ մեթոդներից: Սկզբում հայ բնակչության համար կսահմանվեն մի շարք լուրջ արտոնություններ ու միայն մի քանի տարի անց Ադրբեջանի հատուկ ծառայությունները ձեռնամուխ կլինեն քաղաքական գաղտնի գործողություններին, ազատագրական պայքարի առավել ակտիվ մասնակիցների գաղտնի վերացմանն ու չեզոքացմանը: Բայց նույնիսկ դա չէ ամենավտանգավորը: Ամենաողբերգականն այն է, որ պատմության մեջ առաջին անգամ կծնվի մի փաստաթուղթ, որտեղ իրավաբանորեն կվավերացվի Ղարաբաղի հանձնումը Ադրբեջանին: Եթե նման փաստաթղթի բացակայության պայմաններում Ադրբեջանը ոչնչից չի խորշում ԼՂՀ ստրկացման համար, ի դեմ, օգտվելով միջազգային հեղինակավոր կազմակերպությունների աջակցությունից, արդա դժվար չէ պատկերացնել, ինչ ջանքեր կգործադրվեն այդ փաստաթղթի ստորագրումից զինված լինելով քարերով եւ որոտդպական հրացաններով ու դիմակայելով աշխարհի հզորագույն կայսրության զինված ուժերի ընդիր ստորաբաժանումներին, մենք չէինք խոսում ճնշման մասին, չէինք վիճաբանում ու շարունակում էինք պայքարը: Ճնշման մասին խորհում ենք այսօր, երբ դարաբաղյան գործերը զինված են տանկային գնդերով, հակահրթիռային համալիրներով, արդիական լավագույն ինքնաթիռներով, երբ ԼՂՀ բանակը վերահսկում է բնամոց ազատագրված 7 շրջան: Ի դեմ, այստեղ տեղին է վերհիշել ամերիկյան հայտնի քաղաքագետ Պոլ Գոբլի խոսքերը. «Այլ երկրներին ազդելու կարողությունը շատ ավելի սահմանափակ է, քան ենթադրվում է: Հենց խոսում ենք խոսում տնտեսական, քաղաքական կամ ռազմական ճնշումների մասին, բայց եթե մի որեւէ երկիր չցանկանա ընդառաջ գնալ այդ ճնշումներին, արդա բոլոր ջանքերը դատնում են աղաղյուն»: Այլ կերպ ասած, ճնշվում է նա, ով ցանկանում է ճնշվել:

ԼՂՀ ճգնաժամի կարգավորման գործընթացը այսօր կարծես թե մտնում է վերջնական, ամենաղաստասխանատու փուլը, եւ նման պայմաններում մենք պետք է գործադրենք բոլոր ջանքերը՝ ուղղված հայ քաղաքական հոսանքների, կուսակցությունների, բոլոր կաղող ուժերի համախմբմանը, վերջնական հաջողության հասնելու նպատակով: ԼՂՀ անկախությունն այլընտրանք չունի եւ այն, ինչպես օրերս Մոսկվայում հայտարարեց ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, պետք է կարգավորվի արցախահայության ինքնորոշման սկզբունքի հիման վրա: ԼՂՀ ժողովուրդը կատարել է իր պատմական ընտրությունը, եւ այդ ընտրությունը պետք է պաշտպանվի ողջ հայության կողմից: Դեռեղ ազատություն տանող ճամփան, անշուշտ, կլինի փշոտ ու ծանր, սակայն, ինչպես կասեր հին հելլենական հերոսներից մեկը, զենքը ստրկությունից անհամեմատ ծանր է:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ
Ստեփանակերտ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Քանի դեռ ուշ չէ

Դարշյալ մամուլի օրենքի այլընտրանքային նախագծի մասին...

Զանգվածային լրատվության միջոցների մասին ՀՀ օրենքի նախագիծը, կարծում եմ, այսօր լրագրողների ուշադրության կենտրոնում պետք է լինի: Թերեւս ավելորդ է ասել, որ բավարար ուշադրության չարժանացնելուց հետո վաղը դժգոհելու բարոյական իրավունք չպետք է ունենանք, եթե օրենքը թերի կամ մերժելի կողմեր ունենա: Խոսքը, իհարկե, մի խումբ լրագրողների կազմած օրենքի մասին է: Ինչ վերաբերում է օրենքի, այսպես ասած, իշխանական նախագծին, արդա կա տպավորություն, որ գաղտնի է պահվում հակաժողովրդական միտումներ պարունակելու պատճառով եւ Ազգային ժողովին անակնկալ հրամցնելու նպատակադրմամբ: Ըստ առկա խոսակցությունների, ՁԼՄ-ների մասին (ըստ էության՝ ՁԼՄ-ների եւ լրագրողների դեմ...) օրենքի այդ նախագիծը այժմ գտնվում է նախագահ Բ. Սարգսյանի մոտ կամ նրա տնօրինության ներքո: Ցանկալի է, որ ԱԺ-ի լրատվական ծառայությունը, ի վերջո, հրապարակայնորեն արտահայտվեր օրենքի այս երկրորդ նախագծի մասին, հերքեր կամ հաստատեր առկա լուրերը, հաղորդեր անհրաժեշտ մանրամասներ, թե որոշակի ով (ովքեր) կամ ինչ կազմակերպություն է այդ նախագծի հեղինակը, մինչեւ այժմ ինչու չի հրապարակվել մամուլում եւ երբ է հրապարակվելու, քննարկման եւ ընդունման համար երբ է ներկայացվելու ԱԺ-ի նիստին: Վերջապես, լրագրողները խնդրո առարկա նախագիծը տնօրինողներից ակնկալում են, որ այն ամբողջությամբ հրապարակվի մամուլում:

Անդրադառնալով «Զանգվածային տեղեկատվության միջոցների մասին» ՀՀ օրենքի լրագրողների կազմած նախագծին, կփորձեմ ներկայացնել իմ դիտողությունները եւ առաջարկությունները այդ փաստաթղթի 2-րդ գլխի վերաբերյալ (նախորդը՝ «Ազգի» 1997 թ. թիվ 42-ում): Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետով («Զանգվածային լրատվության միջոցների գրանցումը») սահմանվում է, թե կառավարության լիազորված մարմնի ՁԼՄ-ի գրանցման մասին ներկայացվելիք դիմումում հիմնադիրը ինչ տեղեկություններ պետք է նշի: Այնուհետեւ թվարկված են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, բացառությամբ՝ տպաքանակի: Մի առիթով լսեցի տպաքանակի մասին նշումը պարտադիր չհամարելու վերաբերյալ նախագծի հեղինակներից մեկի պատճառաբանությունը: Ըստ նրա, այժմ շատ թերթերի վրա նշված տպաքանակները, միեւնույն է, չեն համապատասխանում դրանց իրական տպաքանակներին, հետեւաբար տպաքանակի նշումը պարտադիր համարելն անիմաստ է: Կարծում եմ, այս պատճառաբանությունը հիմք չի կարող հանդիսանալ տպաքանակը չնշելու համար: Ինչո՞ւ... Նախքան բուն հարցին պատասխանելը, մի այսպիսի համեմատություն կատարենք, պատկերացրեք ԲՇՏ-ի պետի կողմից հավուր պատշաճի վավերացված ձեր տեղեկանքը որեւէ պաշտոնյա մերժում կամ չի ընդունում՝ պատճառաբանությամբ, թե շատ ու շատ ԲՇՏ-ների պետեր ընդհանրապես կեղծ տեղեկանքներ են տալիս: Բավարար կհամարե՞ք պաշտոնյայի այսպիսի «հիմնավորումը»... Լրագրողներս ձգտում ենք իրավական պետություն ունենալ, հետեւապես պետք է ակնկալենք, որ պաշտոնական այցյանները առաջիկայում կբացառեն նշված եւ իրական տպաքանակների անհամապատասխանությունները, եթե ընդհանրապես կա նման իրողություն: Կառավարության լիազորած մարմնին գրանցման մասին ներկայացվելիք դիմումում, ինչպես նաեւ պարբերական տպագիր հրատարակության յուրաքանչյուր համարում տպաքանակի նշումն անհրաժեշտ է առնվազն երկու պատճառով. տվյալ թերթի, պարբերականի վարկանիշը որոշելու (բոլոր հետազոտողներս չէ, որ կեղծարարությամբ են զբաղվում) եւ, ամենագլխավորը, պետության առջեւ հարկային պարտավորությունները ճշգրիտ կատարելու համար, քանի դեռ մամուլը համապատասխան հարկերից ազատված չէ:

Ելնելով վերը շարադրվածից՝ առաջարկում եմ նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետին ավելացնել եւս մեկ ենթակետ՝ «զ) տպաքանակը», իսկ 15-րդ հոդվածը (գլուխ IV) ավարտել «է) տպաքանակը» ենթակետով: Քանի որ խմբագրությունը տարբեր պատճառներով կարող է անակնկալ նվազեցնել կամ ավելացնել ասենք, թերթերի տպաքանակը, բնականաբար, նշված առաջարկությունը ընդունելու դեպքում, պետք է փոփոխության ենթարկել նաեւ 6-րդ հոդվածի 5-րդ կետը, որպեսզի հիմնադիրը չհայտնվի ակամա օրինախախտի վիճակում: Առաջարկում եմ 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «5. Վերոհիշյալ կետերից մեկի կամ մի քանիսի փոփոխության դեպքում, բացառությամբ «զ» կետի, հիմնադիրը պարտավոր է այդ մասին տեղեկացնել գրանցող մարմնին», այնուհետեւ, ինչպես նախագծում է...

Կարծում եմ՝ հակասություն կա 6-րդ հոդվածի 7-րդ եւ 1-ին կետերի միջեւ: 1-ին կետով սահմանվում է՝ «Զանգվածային տեղեկատվության միջոցը համարվում է գրանցված եւ կարող է սկսել իր գործունեությունը, եթե հիմնադիրը մուծել է գրանցման վճարը եւ գրանցման մասին դիմում ներկայացնելուց 30 օր հետո գրանցող մարմնից որեւէ առարկություն չի ստացել»: Մինչդեռ, նույն հոդվածի 7-րդ կետում նշված է. «Հիմնադրին իրավունք է վերապահվում զանգվածային տեղեկատվության միջոցի թողարկումն սկսել դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում» (ո՞ւր մնացին վերը նշված նախապայմանները): 7-րդ կետում շարադրվածը ոչ թե նախորդում, այլ հաջորդում է 1-ին կետով շարադրվածին եւ, քանի որ, այսպես թե այնպես, թեկուզ ձեւականորեն առնչվում է նույն խնդրին, կարող է «վերջին խոսքի իրավունքով» ընկալվել իբրեւ 1-ին կետով արտահայտված գաղափարի ճշգրտված, վերջնական տարբերակ-շարադրանք: Ելնելով նշվածից, առաջարկում եմ 6-րդ հոդվածի 7-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Հիմնադրին, եթե կառավարության լիազորած մարմինը գրավոր առարկություն չի ներկայացրել, իրավունք է վերապահվում զանգվածային լրատվության միջոցի թողարկումն սկսել դիմումը ներկայացնելուց եւ սահմանված 30-օրյա ժամկետը լրանալուց հետո մեկ տարվա ընթացքում», այնուհետեւ՝ ինչպես նախագծում:

Նախագծի 8-րդ հոդվածի («Հրատարակիչը») 1-ին կետը ընթերցելուց հետո այն տպավորությունն ես ստանում, թե օրենքը կոչված է միմիայն կամ առավելապես հիմնադիրների շահերը եւ իրավունքները պաշտպանելու, եւ ոչ թե՝ հրատարակիչների: Նշված հոդվածը սկսվում է այսպես՝ «Զանգվածային տեղեկատվության միջոցի հրատարակիչն իրականացնում է հիմնադրի ծրագիրը»: Լավ, դա հասկացանք, բայց ընդամենը այդքա՞նը... Եվ ինչո՞ւ այդքանը, ինչո՞ւ ի սկզբանե, օրենքի մակարդակով կաղապար ստեղծել եւ հրատարակչին դնել այդ կաղապարում, ինչո՞ւ իրավունք չվերապահել հրատարակչին՝ հիմնադրի ծրագիրն իրականացնելուց բացի, ստեղծագործական-հրատարակչական ազատ գործունեությամբ զբաղվելու: Եթե ՁԼՄ-ների հրատարակիչները սահմանափակվեն հիմնադիրների ծրագրերը իրականացնելով, դժվա՞ր է հասկանալ, որ կարող են շատ միագույն, գորշ ու ծանձրալի լինել: Ելնելով վերը շարադրվածից, առաջարկում եմ 8-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1. Զանգվածային լրատվության միջոցի հրատարակիչն իրականացնում է ստեղծագործական-հրատարակչական ազատ գործունեություն եւ հիմնադրի ծրագիրը, եթե վերջինիս վերաբերյալ պայմանները նշված են հիմնադրի եւ խմբագրության միջեւ կնքված պայմանագրում», այնուհետեւ, ինչպես նախագծում է:

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Միջին Արևելքի խաղաղության գործընթացը վերադառնում է ելման կետ

Ինչպես հայտնի է, մարտի 18-ին, երբ Թել Ավիվը որոշեց իրագործել կառավարության որոշումը՝ Արևելյան Երուսաղեմում հրեաբնակ նոր թաղամասեր կառուցելու աշխատանքները, փաստորեն միջինարևելյան խաղաղության գործընթացը հայտնվեց ճգնաժամի մեջ, որը ասիճանաբար խորացավ: Շուրջ 10 օր է, ինչ բախումները շարունակվում են Իսրայելի զինված ուժերի, ոստիկանության եւ պաղեստինցիների միջեւ: Իսրայելի այդ քայլը, որը զգալի համախմբեց արաբական երկրներին, խստիվ դատապարտվեց վերջիններիս կողմից, որոնք այդ հարցն արծարծեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, սակայն Իսրայելին դատապարտող բանաձեւը ԱՄՆ-ի վետոյի պատճառով այդպես էլ չհաստատվեց: Այժմ արաբական երկրները մտադիր են Վաշինգտոնի վետոն չեզոքացնել այլ ուղիներով, ինչպես դա կատարվեց ԽՍՀՄ-ի վետոյի նկատմամբ Կորեայի հարցի առնչությամբ: Չնայած այս դեպքում եւս հաջողության հավանականությունը շատ մեծ չէ:

Այս հարցը այնուհետեւ քննարկման առարկա դարձավ Իսլամական համաժողով կազմակերպության մարտի 23-ի իսլամաբաղյան նիստում, որին մասնակցում էին իսլամական 54 երկրների ներկայացուցիչներ, որտեղ թեեւ խիստ դատապարտվեց Թել Ավիվի այդ քայլը, բայցեւայնպես որեւէ լուրջ որոշում չկայացավ: Ի պատասխան Իսրայելի այդ քայլի, իսլամաբաղյան նիստում առաջարկվեց իսլամական երկրներին Թել Ավիվի հետ խզել բոլոր մակարդակների հարաբերությունները, ինչը, հասկանալի պատճառներով, լուրջ արձագանք չգտավ:

Այսուհանդերձ, «Ալ Գոդս» (Երուսաղեմ) կոմիտեի ստեղծվելն է Իսլամական համաժողովի նախաձեռնությամբ եւ դրա շրջանակներում, որին անդամակցում են 14 իսլամական երկրներ եւ Պաղեստինի ինքնավար կազմակերպությունը) անդամ երկրների ԱԳ նախարարների նիստում, որը տեղի ունեցավ Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբաթում, հաստատվեց մի որոշում, ցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, սակայն Իսրայելին դատապարտող բանաձեւը ԱՄՆ-ի վետոյի պատճառով այդպես էլ չհաստատվեց: Այժմ արաբական երկրները մտադիր են Վաշինգտոնի վետոն չեզոքացնել այլ ուղիներով, ինչպես դա կատարվեց ԽՍՀՄ-ի վետոյի նկատմամբ Կորեայի հարցի առնչությամբ: Չնայած այս դեպքում եւս հաջողության հավանականությունը շատ մեծ չէ:

Այս հարցը այնուհետեւ քննարկման առարկա դարձավ Իսլամական համաժողով կազմակերպության մարտի 23-ի իսլամաբաղյան նիստում, որին մասնակցում էին իսլամական 54 երկրների ներկայացուցիչներ, որտեղ թեեւ խիստ դատապարտվեց Թել Ավիվի այդ քայլը, բայցեւայնպես որեւէ լուրջ որոշում չկայացավ: Ի պատասխան Իսրայելի այդ քայլի, իսլամաբաղյան նիստում առաջարկվեց իսլամական երկրներին Թել Ավիվի հետ խզել բոլոր մակարդակների հարաբերությունները, ինչը, հասկանալի պատճառներով, լուրջ արձագանք չգտավ:

Այսուհանդերձ, «Ալ Գոդս» (Երուսաղեմ) կոմիտեի ստեղծվելն է Իսլամական համաժողովի նախաձեռնությամբ եւ դրա շրջանակներում, որին անդամակցում են 14 իսլամական երկրներ եւ Պաղեստինի ինքնավար կազմակերպությունը) անդամ երկրների ԱԳ նախարարների նիստում, որը տեղի ունեցավ Մարոկկոյի մայրաքաղաք Ռաբաթում, հաստատվեց մի որոշում, խարար Ալի Ամբար Վելայաթին «Ալ Գոդսի» կոմիտեի նիստում նշել է, որ «թեեւ ԱԳ նախարարների նիստի արդյունքները շատ հեռու էին Իրանի սպասումներից, սակայն նախորդի համեմատությամբ ձեռքբերումները շոշափելի են»: Իրանի ԱԳ նախարարը ընդգծել է նաեւ, որ Պաղեստինի ազատագրումը հնարավոր չէ համաձայնության գալու եւ Իսրայելի հետ հաշտության միջոցով:

Միաժամանակ Վաշինգտոնը, հակամարտ կողմերին կրկին բանակցությունների սեղանի շուրջ հավաքելու նպատակով, շրջան գործուղեց իր հատուկ ներկայացուցիչ Դենիս Ռոսին: Սակայն վերջինիս առաքելությունը եւս անհաջողության մատնվեց, քանզի Իսրայելի վարչապետը հայտարարեց, որ Արեւելյան Երուսաղեմում նոր բնակելի թաղամասերի շինարարության խնդիրը քննարկման ենթակա չէ, բացի այդ, քանի դեռ կրկին չի ապահովվել Հորդանանի արեւմտյան առափնյա շրջանի գլխավոր քաղաքների անդորրը եւ չեն կալանավորվել «Համաս»-ի ակտիվիստները, Իսրայելը խաղաղության գործընթացին չի վերադառնա: Այլ կերպ ասած, նախ անվտանգության ապահովվում, ապա՝ բանակցություններ: Մինչդեռ, ըստ պաղեստինցիների, քանի որ ստեղծված ճգնաժամային իրավիճակի բուն պատճառը Իսրայելի կողմից Արեւելյան Երուսաղեմում հրեական նոր թաղամասերի կառուցման նախագծի իրականացումն է, ուստի անխարարների մակարդակով, որին մասնակցում էին արաբական 22 երկրների ներկայացուցիչներ: Օրակարգի գլխավոր հարցն արաբական աշխարհի եւ Իսրայելի փոխհարաբերություններն էին: Նիստը հաստատեց մի բանաձեւ, որի համաձայն արաբական երկրներն իրենց հարաբերությունները Իսրայելի հետ պետք է սառեցնեն, այդ երկրի նկատմամբ կրկին կիրառեն տնտեսական սահմանափակումներ, քանի դեռ Արեւելյան Երուսաղեմում նոր բնակելիների կառուցումը կշարունակվի:

Իսրայելը, դատապարտելով Արաբական լիգայի որոշումը, ընդգծել է, որ այդ քայլը լուրջ հարված է միջինարեւելյան խաղաղության գործընթացին, միաժամանակ այդ փաստաթուղթը գնահատելով մերժված ու փուչ: Թել Ավիվի այդօրինակ արհամարհանքը Արաբական լիգայի ընդունած փաստաթղթի նկատմամբ եւ ինքնավստահ կեցվածքը թերեւս պետք է բացատրել այն բանով, որ Իսրայելի եւ արաբական [illegible] հանրապետությունների միջեւ հարաբերությունները գտնվում են տարբեր մակարդակների վրա: Իսրայելի եւ արաբական [illegible] հանրապետությունների միջեւ բացակայում է որեւէ կապ (Սիրիա, Լիբիա եւ Լիբանան): Այլ դեպքերում առկա են լիարժեք դիվանագիտական փոխհարաբերություններ (Եգիպտոս, Հորդանան) եւ ի վերջո՝ միայն տնտեսական կապերով են կապված Իսրայելի հետ (Կատար, Օման): Թեեւ Իսրայելի հետ բնակչության իշխանության գալուն: Դեռեւս 1994 թ. աշնանը «Համաս»-ի խոսնակ Իբրահիմ Ղուզեն, Ամմանում, եգիպտական «Ալ Արաբի» պարբերականին տված հարցազրույցում ընդգծել էր. «Թեեւ Ռաբինն ու Արաֆաթը զավթիչներին դիմադրելը դիտում են որպես ահաբեկչություն, սակայն մենք հուսով ենք Արաֆաթին զինաթափել եւ Իսրայելում ընտրություններից առաջ թուլացնել Ռաբինի (այնուհետեւ Պերեսի–Է. Բ.) դիրքերը՝ հօգուտ Բենիամին Նաթանյահուի»: Կարելի է ասել, որ «Համաս»-ը Իսրայելում 1996 թ. ընտրությունների նախօրեին մասնակցելով ահաբեկչական մի շարք գործողությունների, հաջողությամբ կատարեց այդ «առաջադրանքը»:

1993 թ. Օսլոյի պայմանագրի մանրամասներին լավատեղյակ քաղաքագետների կարծիքով, այժմյան իրավիճակը համապատասխանում է Օսլոյի պայմանագրով նախատեսված սցենարին եւ առանձնապես որեւէ կարեւոր կամ անսպասելի դեպք տեղի չի ունեցել, նշելով, որ բանակցությունները չթեթեւ է դիտել որպես երկու [illegible] բանակցություններ, ինչը հաջ գիտակցել են թե պաղեստինցիները, եւ թե Իսրայելը: Սակայն ստեղծված վիճակում թվում էր, թե Պաղեստինի ազատագրական կազմակերպությունն այլ ելք չէր տեսնում, քան Օսլոյի պայմանագրի ստորագրումը: Հետեւաբար, այսօր Բենիամին Նաթանյահուն իրագործելով իր նախընտրական խոստումները, միաժամանակ ձգտում է առավելագույն արտոնությունների: Թերեւս հենց այս համատեքստով պետք է մեկնաբանել մարտի 31-ին Իսրայելի խորհրդարանում Նաթանյահուի արտահայտած այն միտքը, որ ներկա ճգնաժամի արմատները գտնվում են պաղեստինցիների «հասանելիից» ավելին ստանալու ձգտումների մեջ: Այս տեսակետի կողմնակիցները Վաշինգտոնի առ այսօր որոշ չափով կրավորական դիրքորոշումը վերջին զարգացումների նկատմամբ բացատրում են հենց այս հանգամանքով:

Փաստորեն Թել Ավիվի նպատակը միջինարեւելյան խաղաղության գործընթացում, կարելի է ասել, որ ձերբազատվելն էր Գազայի գոտուց եւ Հորդանանի արեւմտյան ափի որոշ շրջաններից, որոնք Իսրայելին այդպես էլ չհաջողվեց վերահսկելի դարձնել, որտեղ Իսրայելի բանակը պարբերաբար զոհեր է տվել, ինչի պատճառով Իսրայելի բանակի սպաներն ու զինվորները հրաժարվում էին կամ մեծ դժվարությամբ էին համաձայնում նշված շրջաններում ծառայել: Իսկ նման «զոհողության» դիմաց, այն է՝ նշված շրջաններում պաղեստինյան ինքնավարություն հաստատելով, Թել Ավիվը ակնկալում էր Միջին Արեւելքում խաղաղություն, Իսրայելի անվտանգության ապահովում եւ արաբական երկրների հետ բնականոն փոխհարաբերություններ:

Ինչեւէ, այժմ անժխտելի է այն փաստը, որ միջինարեւելյան խաղաղության գործընթացը լրջորեն տապալման սպառնալիքի տակ է, իսկ ստեղծված իրավիճակում Պաղեստինի ինքնավար կազմակերպության ղեկավար Յասեր Արաֆաթը առավել ծանր դրության մեջ է հայտնվել, որից դուրս գալու մեկ միավոր [illegible] տը միջազգային հասարակայնության բարոյական աջակցությունն է, որը գործի դնելով, կաշխատի դուրս գալ ճգնաժամից, քանզի չկա նաեւ նրա համար հեռադիտակի ճանապարհ: Իսկ թե ինչ գնով դա կհաջողվի նրան, հարցական է:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ՄԱԿ-ի աշխատակազմը եւ բյուջեն կկրճատվեն

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը, ըստ «Ինտերնեյշընալ հերալդ տրիբյուն»-ի, որոշել է կրճատել ՄԱԿ-ի աշխատակազմը եւ բյուջեն, ինչպես նաեւ ՄԱԿ-ի որոշ դեղարտամենտներ միացնելով՝ իր հսկողության տակ վերցնել: Սա Անանի Միացյալ ազգերի կազմակերպությունում խոսացած բարեփոխումների առաջին քայլն է լինելու:

ՄԱԿ-ի հանձնաժողովի պատասխանական հաշվետվությունում Անանը հայտարարել է, որ 1000-ով նվազեցնելու է քարտուղարության, կամ էլ ՄԱԿ-ի կորիզը հանդիսացող անձնակազմի անդամների թիվը, որը մոտ 9000 է եւ հիմնականում կենտրոնացած է Նյու Յորքում, Ժնեւում



եւ Նայրոբիում: Հաշվետվությունում նաեւ նշվել է, որ 1998–99 թթ.-ին բյուջեն կկրճատվի 123 մլն դոլարով: Կազմակերպության ընթացիկ բյուջեն տարեկան մոտավորապես 1 մլրդ դոլար է: Անանը խոստացել է նաեւ, որ կմիացնի տնտեսական եւ սոցիալական հարցերով զբաղվող դեղարտամենտները եւ կնվազեցնի փաստաթղթաբարությունը:

Գլխավոր քարտուղարի ասելով, կազմակերպության միջոցների 38 տոկոսը նվիրվել է ՄԱԿ-ի վարչակազմին, եւ ինքը մտադիր է կրճատել կազմակերպության «բյուրոկրատական» աղարատին հատկացվող ֆոնդերը 1/3-ով: Խնայված փողերը նա մտադիր է ուղղել զարգացող երկրների տնտեսական եւ սոցիալական զարգացմանը:

ԱԲ. Մ.

Ալբանական նավի կործանումից հետո ալբանացիները զայրացած են իտալացիների վրա

31 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», BBC: Իտալիայի իշխանությունները հետաքննություն են սկսել ուրբաթ օրը տեղի ունեցած ծովային աղետի կապակցությամբ, որի ընթացքում ալբանացի փախստականների նավը Ադրիատիկ ծովում բախվել է իտալական ռազմանավին եւ խորտակվել: Իտալական ուղղաթիռները եւ նավերը շարունակում են որոնել ալբանացիներին: 35 ալբանացի փրկվել է, 79-ը՝ զոհվել, ընդ որում իտալացիները 4 դիակ են միայն հայտնաբերել: Եվ քանի որ իտալական ռազմանավերին հրամայված էր հետ ուղարկել փախստականներ տեղափոխող ալբանական նավերը, Ալբանիայում այն կարծիքին են, թե իտալական կորվետը "կանխամտածված ձեւով է հարվածել ալբանական նավին: Այդ պատճառով սաստիկ բարդացել է ՄԱԿ-ի Ախ-ի որոշմամբ նախատեսված միջազգային զինուժի Ալբանիա գալը, որը պետք է ղեկավարեն իտալացի սպաները: Այդ ստորաբաժանումները պետք է պաշտպանեն Ալբանիայի ծովային նավահանգիստները եւ մարդասիրական օգնության տեղափոխումները Ալբանիայի տարածով: Ողջ Ալբանիայով մեկ սուգ է հայտարարված, իջեցված են ազգային դրոշները: Այդ երկրի արտգործնախարարը հայտարարեց, թե աղետը՝ հնարավոր էր կանխել: Կառավարական հայտարարագրում հիշատակվում են Իտալիայում գտնվող 13 հազար ալբանացի փախստականները եւ պահանջվում է պատշաճ վերաբերմունք ցուցաբերել նրանց նկատմամբ: Իսկ Վլյորա նավահանգստում, ուր պետք է ժամանեն միջազգային ուժերը, տեղի ապստամբների կոմիտեն հայտարարեց, թե չի հանդուրժի ոչ մի իտալացու: Իտալացիները կտրականապես մերժում են ալբանական մեղադրանքները եւ հայտարարում, որ ծովային վթարը տեղի է ունեցել ալբանացի նավապետի պատճառը ստանձնած անձի պատճառով, որի անսպասելի գործողությունները այնպես են շփոթեցրել իտալացիներին, որ չի օգնել նույնիսկ իտալացի նավապետի արձակած «կտրուկ ետ» հրամանը, եւ նավերը բախվել են:

ՀԱՄԱՌՈՏ

Բորիս Ելցինը մտադիր չէ մասնակցելու ՆԱՏՕ-ի մադրիդյան ժողովին

31 ՄԱՐՏ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Ռուսաստանի նախագահի մամլո քարտուղար Սերգեյ Յաստրժեմբսկին ասաց, թե Բորիս Ելցինը մտադիր չէ մասնակցելու Մադրիդում հունիսին կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովին, որի ընթացքում Հյուսիսատլանտյան դաշինքը պետք է դաշտոնապես համալրվի նոր անդամներով: Միաժամանակ, Յաստրժեմբսկին ասաց, որ Ռուսաստանի նախագահը եւ արեւմտյան դաշինքը կարող են համաձայնության գալ մինչեւ ՆԱՏՕ-ի գագաթաժողովը: Յաստրժեմբսկու խոսքերով, Բորիս Ելցինը եւ Բիլ Քլինթոնը Հելսինկիի գագաթաժողովում քննարկել են Փարիզում հանդիպելու եւ Ռուսաստան–ՆԱՏՕ պայմանագիրը կնքելու հնարավորությունը: Կրեմլի խոսնակը նշեց, որ այդօրինակ պայմանագիրը կնպաստի Ռուսաստանի եւ արեւմտյան դաշինքի հարաբերությունների բարելավմանն ու վերջ կդնի փոխադարձ անվստահության միտումներին:

Հեյդար Ալիեւը հաջորդ շաբաթ կայցելի Թուրքիա

31 ՄԱՐՏ, RFI: Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը ապրիլի 7-10-ը պատասխանական այց կկատարի Թուրքիա: Այդ մասին այսօր հայտնեց Թուրքիայի արտգործնախարարության ներկայացուցիչը:

Բուլղարիայում աշխատավարձերը կբարձրանան 70 տոկոսով

ՍՈՖԻԱ, 1 ԱՊՐԻԼ, ՓԱՍՏ: Բուլղարիայի կառավարությունն անակնկալ որոշում ընդունեց բենզինի գինը 9 տոկոսով իջեցնելու մասին: Բուլղարիան ամիսներ շարունակ վառելիքային ճգնաժամի մեջ էր: Միաժամանակ, կառավարությունը որոշեց բարձրացնել էլեկտրականության սակագինը: Հաղորդվում է, թե էլեկտրամատակարարման պետական ձեռնարկության ձախողման պատճառները հոսանքի դիմաց պետական ընկերությունների չվճարումներն են: Կառավարությունը կարգադրել է 30 տոկոսով բարձրացնել ածխի գինը եւ 70 տոկոսով՝ ջեռուցման սակագինը: Այսօրվանից Բուլղարիայում աշխատավարձերը բարձրանում են 70 տոկոսով:

digitised by A.R.A.R.@

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1921 Թ. ՄԱՐՏԻ 16

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԱՐՅԱՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԳՆՈՎ ՇՏԿԵՑԻՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎԱԾ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Հայ-թուրքական քառոշյական պատերազմում տարբեր պատճառներով դեռեւս զիջողի եւ պաշտպանվողի դերում եմ: Բնականաբար, մեր ուշադրության կենտրոնում է օտար մամուլի ցանկացած հրապարակում, որտեղ պատմական ճշմարտության եւ գաղութային լծի դեմ պայքարելու ժողովուրդների միջազգայնորեն ճանաչված իրավունքի տեսանկյուններից է շարադրվում ու մեկնաբանվում Հայ Դատի այս կամ այն խնդիրը: Այդպիսինն է «Պրավդա-5» շաբաթաթերթի վերջին, 9-րդ համարում տարագրված եւ այսօր մեր ընթերցողներին ներկայացվող հոդվածը: Ուշագրավ է, որ շաբաթաթերթի խմբագրությունը հարկ է համարել համառոտ ներածականով հավանության արժանացնել հոդվածագրի հիմնական գաղափարներից մեկը՝ հայերի, աբխազների եւ օսերի ազատագրական պայքարի արդարացիությունը:

1921թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրքական տխրահռչակ եւ արյունաբեր պայմանագրի հերթական տարելիցը եւս մի առիթ է, որպեսզի խորապես գիտակցենք հայ ազգի տեղը տարածաշրջանում եւ ժամանակակիցներիս դերը 5000-ամյա արմատներ ունեցող պետականության ամրապնդման գործում: Չմոռանանք նաեւ Նախիջեւանը:

Լեոն ՏԻԳՐԱՆՅԱՆ

Սովետական Միության անկումից հետո Անդրկովկասում բարդ ու խճճաբեփոր իրավիճակ ստեղծվեց: Պատմականորեն օտարական հանդարտեցության հուսալիորության տակ եղած երեք հանդարտեցությունները Ադրբեջանը, Հայաստանը եւ Վրաստանը, հիշելով իրենց վաղեմի (1918-21թթ.) ինքնուրույնությունը, ինքնիշխան հայտարարեցին իրենց: Ընդ որում, ոչ ոք չցանկացավ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ դարի արշալույսին այդ հեռավոր անկախությունը շատ բաներում ձեւական բնույթ էր կրում եւ ուղեկցվում էր թուրքական-գերմանական եւ անգլիական բանակների կողմից դրանց բռնագրավմամբ: Եվ պատահական չէ, որ կեղծ ազատություն ձեռք բերելով, երեք պետությունները նորից ներխուժեցին մեծ պետությունների ագրեսիվական եւ ֆինանսական վեճերի ոլորտը: Կովկասյան լեռնաշխարհի վիճակը ավելի ու ավելի վատանում էր հինգ ինքնավարությունների Վրաստանում՝ Աբխազիայի, Աջարիայի եւ Հարավային Օսեթիայի, Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի գոյությամբ, որոնց առաջացումը իրավաբանական եւ բարոյական տեսանկյունով հեռու է անթերի լինելուց: Եվրոպայի եւ Ասիայի ռազմավարական խաչմերուկում տարբեր ժողովուրդների եւ շահերի միահյուսման մասին է խոսքում ռուս-հայկական նախաձեռնությունները կենտրոնի փորձագետ Սեղա Վերմիշեւան:

Եթե ԽՍՀՄ-ի մյուս շրջաններում նեռոյալ էթնիկական առումով բացառիկները (Հյուսիսային Կովկասը, Միջին Ասիան), առկա էր պետությունների ցուտահանչյուր էթնոսին համահավասար իրավական եւ մեկը մյուսից նվազագույն կախվածության կարգավիճակ առահովելու ձգտումը, ապա Անդրկովկասում սկզբունքորեն այլ մոտեցում կար:

Առաջին, ի վիճակի չլինելով ինքնուրույնաբար դիմակայել Պարսկաստանին, Վրաստանը մտավ ռուսական միապետության կազմի մեջ: Վրաստանի խանությունների եւ թագավորությունների ինքնակամ ու ասիճանական մուտքը ռուսական միապետության մեջ սկիզբ առավ 1801 թվից: 1804-13թթ. ռուս-պարսկական պատերազմի հետեւանքով Պարսկաստանից անջատվեցին Ղարաբաղը, ինչպես նաեւ այժմ Ադրբեջան կոչվող տարածքները (Բաքվի, Գյանջայի, Շեմիսի, Շիրվանի, Թալիշի խանությունները եւ Դաղստանի հարավային մասը Դերբենդի խանությունը: Ռուսական միապետության կազմի մեջ նրանց մտնելը ամրապնդվեց 1813թ. Գյուլիստանի պայմանագրով:

Ժամանակագրական առումով հաջորդը ռուսական միապետության մեջ մտավ Աբխազիան (1810թ.): Մինչեւ 1864թ. Աբխազիան ռուսական միապետության մեջ ինքնավարության կարգավիճակ ուներ: (Հետագայում դա ռուսական միապետության Սուխումի զինվորական բաժինը եւ Սուխումի զինվորական շրջանն էր): Հետագայում Թուրքմենչայի պայմանագրով 1828թ. Պարսկաստանից անջատվեց Արեւելյան Հայաստանը Երեւանի եւ Նախիջեւանի խանություններ: Հենց այդ ժամանակ դրանցով Ռուսաստանի կազմում ստեղծվեց Հայաստանի մարզը:

Արեւմտյան Հայաստանի մարզերի (Պարսի, Արդահանի, Երզրումի, Բայազետի եւ այլոց) միացումը Ռուսաստանին տեղի էր ունենում ռուս-թուրքական պատերազմների ընթացքում: Անդրկովկասի այդ մասի Ռուսաստանին միանալուն սկիզբ դրվեց 1828թ. եւ տեւեց մոտավորապես 50 տարի: Մինչդեռ Բեռլինի 1878թ. կոնգրեսը ռուսական զենքի շատ հաղթանակներ չեզոքացրեց ճանաչելով Ռուսաստանի իրավունքը միայն Պարսի եւ Արդահանի վրա իրենց շրջաններով, ինչպես եւ Բաքվի վրա մարզի մի մասով:

Արդյունքում, 1801-ից 1878թթ-ին Թուրքիան եւ Պարսկաստանը դուրս մղվեցին Անդրկովկասից եւ այնտեղ հաստատվեց Ռուսաստանը, որի համար 77 տարի պահանջվեց:

Նահանգային բաժանումները, որպես կանոն, հաշվի չէին առնում Ռուսաստանի ժողովուրդների տարածային տեղաբաշխումը: Նահանգների սահմանները էթնոսների համաչափակ բնակության ներքին սահմաններ չէին: Այս հանգամանքը ճակատագրական եղավ Անդրկովկասի համար եւ ազգային-ազգային կազմավորումների ներճահանգային սահմաններից նոր սահմաններին անցնելը տարածային վեճեր, առճակատումներ եւ պատերազմներ էր հրահրում: Անդրկովկասի ազգամիջյան հակամարտությունները իրենց հիմքում մի շարք պատճառներ ունեին: Մեր կարծիքով մեկն այն էր, որ Անդրկովկասում ժողովուրդների մի մասը (աբխազները, հայերը, վրացիները, օսերը) ի հակադրություն մյուս ժողովուրդների, Ռուսաստանի միապետության կազմի մեջ մտնելուց շատ առաջ իրենց սեփական պետականությունը եւ որոշակի սահմաններն ունեին, որոնք հաստատված էին ինչպես պետական փաստաթղթերում այնպես էլ ազգային գիտակցության մեջ: Այս հանգամանքը չէր կարող արյունալի ընդհարումների պատճառ չդառնալ: 1918թ. իր շահերին հետամուտ Անդրկովկասի Մեյմը գերմանական եւ թուրքական հրամանատարության դահանջով, որոշում ընդունեց լուծարել կարճ կյանք ունեցող Անդրկովկասի ժողովրդական հանրապետությունը եւ Անդրկովկասի տարածքի անկախ պետությունները Վրաստանը, Հայաստանը եւ Ադրբեջանը:

Այդ ընթացքում երբեք իր պետականությունը չունեցող Ադրբեջանը ի սկզբանե ընդունվում էր որպես եւս մեկ թուրքական հանրապետություն, որը ելք ուներ դեպի Կասպիականն ու Միջին Ասիան, եւ բռնագրավել էր բուն հայկական տարածքները:

Նշենք, որ այդ փորձը ներկայումս տարածվել է Հարավսլավիայի վրա, որտեղ Բոսնիայում կազմակերպվել է արհեստական մի ինչ-որ մահմեդական-խորվաթական դաշնություն, որը ելք ունի դեպի Միջերկրականը, ինչպես եւ Կիպրոսի թուրքական պետությունը:

Այսպիսով, 1918թ. սկսած Օսմանյան միապետության անկումից անմիջապես հետո սկսվեց «Օսմանյան Պորտի ափխարհահաղափական միջուկի այսօրվա Թուրքիայի երկրորդ աճը»: Անդրկովկասի ազգային-պետական տարածքների սահմանագծումները տեղի էին ունենում Անգլիայի եւ Գերմանիայի, ինչպես եւ Թուրքիայի ռազմական ուժի ազդեցության տակ եւ նրանց մասնակցությամբ: Իրենց շահերին զուգընթաց, նրանք իրականացնում էին նաեւ Ադրբեջանի շահերը տարածաշրջանում Ռուսաստանի բացակայության պայմաններում եղեռնի պատճառով թուլացած Հայաստանի հաշվին:

Ստեղծված իրադրության պայմաններում տարածաշրջանում հիմնականը դարձավ Հայաստանի եւ Ղարաբաղի հակամարտությունը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ: Դա հայ բնակչության պայքարն էր ոչ թե այն տարածքների, որոնք պատմականորեն հազարամյակներ շարունակ եղել են իրենց բնակության վայրը: Այդ շրջանում ավելի պակաս դատապարտելի էին բնութագրվում Վրաստանի հակամարտությունները Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի հետ: Այդուհանդերձ, ընդգծենք, որ ցարական Ռուսաստանի անկման ու սովետական իշխանության հաստատման շրջանում նրանց պետությունների կայացումն ընթացավ տարբեր ուղիներով: Ռուսական միապետության անկումից հետո Աբխազիայի ժողովուրդը Հյուսիսային Կովկասի լեռնային ժողովուրդների հետ միասին կառուցում էր իր պետականությունը: Վրաստանի Հանրապետության կազմավորման պահին (26.05.1915թ.) Աբխազիան զսնվում էր 1918 մայիսի 11-ին կազմված Լեռնային Հանրապետության մեջ (Գորսկայա Ռեսպուբլիկա), որը հակված էր մերձենալ ոչ Ռուսաստանի, ոչ Վրաստանի, այլ Թուրքիայի հետ:

Այդ նույն թվականին Աբխազիան դարձավ Վրաստանի բռնության առարկան եւ բռնագրավվեց վրաց մենշեւիկների կողմից:

1921թ. ինչպես Աբխազիայում, այնպես էլ Վրաստանում հաստատվել էր Սովետական իշխանությունը: Սակայն, դրանից հետո էլ պետականության ձեւավորումն այնտեղ ընթանում էր բավական յուրահատուկ կերպով, որը պայմանավորված էր այնպիսի սուբյեկտիվ գործոնով, ինչպիսին էր Ստալինի եւ Օրջոնիկիձեի ճնշումը:

Մի կողմից Աբխազիան միութենական հանրապետություն էր համարվում եւ ուներ այդ կարգավիճակին համապատասխան իրավունքներ, մյուս կողմից նա որպես ինքնուրույն սուբյեկտ, չմտավ ԽՍՀՄ կազմի մեջ: Ստալինի-եւ Օրջոնիկիձեի ճնշման հետեւանքով, Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ հաստատվեցին «պայմանագրային» հարաբերություններ (որ համապատասխանում էին հանդաբնության սկզբունքին), եւ մինչեւ 1931թ. Աբխազիան կոչվում էր «պայմանագրային» հանրապետություն: 1931թ. Ստալինի թելադրանքով, նրա կարգավիճակը փոխվեց եւ Աբխազիան մտավ Վրաստանի կազմի մեջ որպես ինքնավար հանրապետություն:

Աջարացիներով բնակեցված Թուրքիային սահմանակից տարածքը առաջին ափխարհամարտի տարիներին դարձավ ցարական Ռուսաստանի եւ Թուրքիայի ռազմական ակտիվ գործողությունների ասպարեզ: Ռուսաստանի փետրվարյան հեղափոխությունից հետո, ի թիվս Առաջավոր Ասիայի ռուսական այլ տարածքների, թուրքական զորքերը գավթեցին նաեւ Բաթումը:

Թուրքերը, գերմանացիները, անգլիացիները մեկը մյուսի ետեւից գրավում էին այս նավահանգիստը: Անգլիացիների հեռանալուց հետո, Բաթումի իշխանությունը անցնում է մենշեւիկներին, որոնք շուտով կրկին հանձնում են այն թուրքերին: 1921թ. մարտի 18-ին այս տարածքում հաստատվում է Սովետական իշխանությունը:

Այս իրադարձությանը նախորդել էր ՌՍՖՍՀ եւ Թուրքիայի միջեւ 1921թ. մարտի 16-ին կնքված տխրահռչակ մոսկովյան պայմանագիրը, որի համաձայն Թուրքիային անցան Արեւմտյան Հայաստանի ռուսական մասի տարածքները (Կարսի, Արդահանի գավառները), որոնց հայկական բնակչությունը բնաջնջվել էր 1915թ.: Դրա փոխարեն թուրքերը թողեցին Բաթումը: 1921թ. Նմռանը Բաթումի մարզի տարածքում կազմավորվեց Աջարական Ինքնավար Հանրապետությունը, որը հենց այդ ժամանակ էլ մտավ Վրացական ՍՍՀ-ի մեջ:

Կովկասում ազգային տարածքների սահմանագծման ժամանակ Օսեթիան եւ նրա բակչությունը մասնատվեց: Օսեթիայի Կովկասյան Մեծ լեռնաշղթայից հյուսիս տարածվող մասը, 1921թ. սովետական իշխանության հաստատումից հետո, մտավ ՌՍՖՍՀ-ի մաս կազմող Լեռնային Ինքնավար Հանրապետության մեջ:

Կովկասյան Մեծ լեռնաշղթայի հարավակողմում ընկած Օսեթիայի մյուս մասը, որպես Հարավ-Օսեթական ինքնավար մարզ, մտավ վրացական ՍՍՀ-ի կազմի մեջ:

Ցնցող ու խոր արդյունքներ առաջացնող իրադարձություններից հետո, վերջին հաշվով, Անդրկովկասի Արեւմտյան մասում սովետական իշխանության տարիներին առաջացավ Վրացական ՍՍՀ, որի մեջ մտնում էին ազգային-պետական երեք կազմավորումներ Աբխազիան, Աջարիան եւ Հարավային Օսեթիան:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը Անդրկովկասում 1915-ին Թուրքիայում կատարված Հայոց ցեղասպանության հետեւանքով, որը 1,5 միլիոն մարդու կյանք խլեց, ինչպես նաեւ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո տեղի ունեցած ռուս-թուրքական ճակատի կազմալուծման ու ցարական բանակի նահանջի հետեւանքով, որի փայլուն հաղթանակները, մինչ այդ, մոտեցնում էին Կոստանդնուպոլսի անկումը: Հայաստանը եւ Ղարաբաղը թողնվել էին թշնամու դեմ մենակ, որի հետեւանքով եւս 500 հազար մարդու գոհ տվին: Այդպիսով, հայ ազգը կորցրեց իր բնակչության մեկ երրորդը:

Հայաստանի եւ Ռուսաստանի տարբեր նոպատակներ հետապնդող գործողությունների պայմաններում այդ անհավասար հակամարտության հաղթական արդյունքը հանգեց 1921թ. մարտի 16-ին ՌՍՖՍՀ-ի եւ Թուրքիայի միջեւ Մոսկվայում կնքված պայմանագրի դրույթներին: Այդ պայմանագրի համաձայն նախկին ռուսական կայսրության տարածքից 24 920 քառ. վերստ տարածք (Կարսի, Արդահանի, Կաղզվանի, Արդվինի շրջանները Բաթումի մարզը հարավային մասը, Էրիվանի նահանգի գավառը) անցավ Թուրքիային: Ընդ որում, Սուրմալուի գավառը (3 241 վերստ) երբեք չի մտել Օսմանյան կայսրության մեջ: Փոխարեն գեր դարձավ սահման: Պայմանագրում տեղ գտավ մի հատուկ հոդված, որի համաձայն Նախիջեւանի մարզը պետք է ձեւավորվեր «ինքնավար տարածք Ադրբեջանի վերահսկողության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը չի գիջի վերահսկողությունը մի երրորդ պետության» (ԽՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթեր, հատ. 3-րդ, էջ 598-599):

Թուրքիայի կողմից առաջ քաշված այս պայմանը քաղաքական անհեթեթություն էր, քանի որ Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ 1828թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրից հետո, հենց Նախիջեւանի եւ Երեւանի խանությունները կազմեցին ցարական Ռուսաստանի Հայկական մարզը:

Այդուհանդերձ, 1923թ. Նախիջեւանի այդ բուն հայկական տարածքը Ադրբեջանի կազմի մեջ մտավ ինքնավար հանրապետության կարգավիճակով: Դրանից հետեւում է, որ թուրքական թելադրանքով Սովետական Ռուսաստանը որոշեց ոչ միայն ՍՍՀՄ-ի արտաքին սահմանը Թուրքիայի հետ, այլեւ հայկական եւ Ադրբեջանական ՍՍՀ-ների միջեւ ներքին սահմանները հօգուտ Ադրբեջանի:

Համանման ճակատագիր բաժին ընկավ նաեւ Ղարաբաղին, որը նույնպես հայերի բնակության պատմական տարածքն է: Ղարաբաղը մինչեւ Անդրկովկասում սովետական կարգեր հաստատվելը, մեկ անգամ է, որ ենթարկվել է Թուրքիայի ռազմական միջամտությամբ ուղեկցող ադրբեջանական ագրեսիայի: Այնուամենայնիվ, Ղարաբաղին հաջողվել է Հայաստանի աջակցությամբ հակահարված տալ թշնամուն: Դրանից հետո Ղարաբաղը դարձավ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության առարկա: Սակայն Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումով, տրամաբանական էր նաեւ այստեղ տրամաբանական էր նաեւ այստեղ տրամաբանական էր նաեւ այստեղ տրամաբանական էր նաեւ այստեղ սովետական իշխանության ազգային հաղթական հիմնական սկզբունքների իրագործումը: Սակայն տեղի ունեցավ հակառակը, հաղթական իրադրությունը, Բաքվի նավթը, Ստալինի թելադրանքը հանգեցրին այն բանին, որ ՌԿ(բ)Կ-ի Կովկասյան բյուրոն իր 10-ը անդամներով 1921թ. հունվարի 5-ին ընդունեց Ղարաբաղը, որի բնակչության 95 տոկոսը հայեր էին եւ իր պետականության զարգացումը կարող էր Սովետական Հայաստանի հետ, Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու որոշումը: Այս տեսակետը պատճառում էին Կիրովն ու Օրջոնիկիձեն, սակայն վերջին հաշվով չկարողացան հասնել այն: Ղարաբաղի լեռնային մասի Ադրբեջանի կազմի մեջ մտնելը որպես ինքնավար մարզ, ձեւակերպվեց միայն 1923թ.: Իսկ դաշտային մասը Ադրբեջանի կազմի մեջ մտցվեց վարչատարածային միավորների տեսքով (Շահումյանի շրջան եւ այլն):

Այսպես սարքվեց նոր ազգային-պետական կազմավորումը Ադրբեջանական ՍՍՀ-ն, որ ներառում է Ղարաբաղի (4.4 հազ. քառ. կմ) եւ Նախիջեւանի 15.5 հազ. քառ. կմ) տարածքները:

Բացի դրանից, ինչպես արդեն գրվել է, Ադրբեջանին տրվեցին նաեւ դաշտային Ղարաբաղի հողերը: Դրանով հանդերձ Ադրբեջանի տարածքը կազմեց 86,6 հազ. քառ. կմ:

...Արեւմտյան Հայաստանի միակցումը Թուրքիային (տարածքը 721 հազ. քառ. կմ) ավելացրեց նրան 19 հազ. քառ. կմ: Ընդհանուր առմամբ, հօգուտ Թուրքիայի եւ Ադրբեջանի հայ բնակչության պետականության եւ բնակության պատմական տարածքներից յուրացվել է 28,5 հազ. քառ. կմ: Այն դեպքում, երբ մնացածը (Սովետական Հայաստանի տարածքը) կազմեց միայն 29,8 հազ. քառ. կմ, այսինքն Հայաստանից բռնագրավվել է բնակչության բուն բնակելի տարածքի կեսը, իսկ բնակչությունը, ինչպես արդեն նշեցինք, 1/3-ով ոչնչացրեցին:

Այսպիսով, արդեն սովետական շրջանում, Անդրկովկասում, ի տարբերություն Սովետական միության այլ տարածաշրջանների, ավարտվեց եւ հաստատվեց նրա ազգային-պետական սահմանագծումների ուժային զավթման գործելակերպը, որը սկիզբ էր առել իմպերիալիստական հարկադրանքի պայմաններում: Եվ եթե ինչ-որ չափով դա կարելի է բացատրել իր գոյության առաջին տարիներին Սովետական իշխանության թուլությամբ եւ Թուրքիայի հարկադրանքին դիմակայելու անկարողությամբ, ապա անհասկանալի է, թե ինչու, այդ սխալները չուղղվեցին հետագայում: Չէ՞ որ երկրի այլ տարածաշրջաններում, կենտրոնական իշխանության գիտությամբ, ընթանում էր ազգային-պետական կազմավորումների կարգավիճակի ու սահմանների ճշգրտումը (դրանց բարձրացման եւ ընդլայնման ուղղությամբ):

Անդրկովկասում դա չեղավ:

Սխալների շարքման նախաձեռնությունը սանձեցին տեղերում: Ինչը եւ ողբերգական հետեւանքներ ունեցավ:

Թուրքիային եւ Ադրբեջանին անցած հայկական տարածքները, իենին նշանակալի մեծություն չունենալով, ռազմավարության տեսակետից անգին են, քանի որ.

ա) Կարսի եւ Արդահանի դիրքերն այնպիսին են, որ դրանց հանձնումը նշանակում էր Անդրկովկասի դարպասները բացել Թուրքիայի առաջ, հարավից սպառնալով Ռուսաստանին:

բ) Ղարաբաղի եւ Նախիջեւանի նկատմամբ Ադրբեջանի ունեցած իրավասությունը, վերջինիս հնարավորություն է տալիս երկու կողմից սեղմել եւ համաղասասխան իրավիճակում զավթել Հայաստանի Մեղրու 46 կմ լայնության հատվածը, որը տարանջատում է (սեղմի դեպքում խրված է) մահմեդական էթնոսի շրջայի անընդհատությունը, որն իր հերթին խոչընդոտում է Թուրքիայի նեռոսը Ադրբեջան եւ Միջին Ասիա:

Բացի այդ, Մեղրու շրջանի ռազմավարական նշանակությունն այն է, որ Իրանի հետ Հայաստանի այդ ցամաքային սահմանը (որը բաց է նաեւ իր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի համար) ճանապարհ է դեպի Պարսից ծոց եւ Հնդկական օվկիանոս:

գ) Իրադրությունը բարդանում է նրանով, որ Թուրքիան «ԽՍՀՄ-ին թելադրելով Նախիջեւանը հանձնել Ադրբեջանին, եւ այդ տարածաշրջանի հետ ընդհանուր սահման ստեղծելու համար նախատես Իրանից գնեց ոչ մեծ (10 քառ. կմ) հողակտոր:

Այդուհանդերձ, որոշ վերոհիշյալ պահերը անտեսվեցին, եւ Անդրկովկասի արեւելյան մասում ձեւավորվեց ադրբեջանական փոքր կայսրություն, որը ներառում էր երկու հայկական ինքնավար կազմավորումներ, որոնք Հայաստանից բաժանվում էին ներքին սահմանով (հետագայում Լաչինի շրջանում էինք տրական շերտավորման ստեղծումով Հայաստանը եւ Ղարաբաղը բաժանվեցին): Իսկ Նախիջեւանը ինչպես միշտ, կից է Հայաստանին եւ երբեք Ադրբեջանի հետ չի ունեցել որեւէ սահման:

Բացի այդ, Կովկասի մասնաբաժնով վերջինիս քրիստոնեական կերպարը բնորոշող եւ ռուսամետ կողմնորոշում ունեցող երկու ժողովուրդները, հայերը եւ օսերը բաժանվեցին միմյանցից, որը նշանակալի չափով թուլացրեց այս ժողովուրդներին դրանով թուլացնելով Ռուսաստանի դիրքը տարածաշրջանում:

Սակայն, եթե հաշվի առնենք, որ Անդրկովկասում հետեւողականորեն իրագործվել է թուրքական ափխարհահաղափական ռազմավարությունը, ապա դա տարօրինակ չի թվա: Այս համատեքստում Հյուսիսային Օսեթիայի, Հայաստանի եւ Ղարաբաղի բաժանումը պետք է ամբողջականության մեջ դիտարկվի: Անդրկովկասը Ռուսաստանից կտրելու միասնական ռազմավարության տրամաբանության մեջ, քանի որ.

1) Հենց Հյուսիսային եւ Հարավային Օսեթիայի միջով է անցնում Ռուսաստանի խորքերից Անդրկովկաս գնացող ամենակարճ ճանապարհը:

2) Հայաստանի (Մեղրու) 46 կիլոմետրանոց հատված պանթուրքիզմի ռազմավարական ոլորտներում ճշգրտես հանդես է գալիս որպես բռնակցման ենթակա, որի նոպատակն է փակագծերից դուրս հանել Հայաստանը եւ նրա ռազմավարական դաշնակցին Ռուսաստանին, հարավ-արեւելյան եւ հարավ-արեւմտյան պարագծով մեկ փակելով Անդրկովկասյան ափխարհահաղափական տարածությունը Թուրքիայի եւ Ադրբեջանի միջոցով:

Ցավոք, Անդրկովկասի ազգային-պետական սահմանագծումների պատճառական մոդելը, որը Թուրքիան 1921թ. Ռուսաստանի վգին էր փաթաթել, այսօր էլ իրողություն է, թեեւ փաստացիորեն այն այսօր շտկվել է «ներքեւից» ժողովուրդների՝ հայերի, աբխազների, օսերի կողմից՝ արյունալի ընդհարումների եւ պատերազմների հետեւանքով:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ազգային հավաքականի խայտառակությունը

1962 թե 1963 թթ. Թբիլիսիում տեղի «Դինամոն» 5-0 հաշվով ջախջախիչ պարտության մատնեց «Արարատին»: 5 գնդակի հեղինակն էլ մեկ ֆուտբոլիստ դարձավ Դաթունաշվիլին (այդ տարի նա դարձավ Խորհրդային Միության ֆուտբոլի առաջնության ռմբարկու): Խաղից հետո ցնծացող վրացիների ծափողջույնների տակ դինամոյականները եւ նրանց միացած երեք արարատցի մեկնեցին կերուխումի, նշելու այդ ֆուտբոլային թատերախաղը: Այն ժամանակ մեզանում ոչինչ չհասկացան, կամ ցույց չտվեցին: Ստորացման կեղտը հանգիստ մաքրեցին դեմքերից, ընդունելով կատարվածը որպես զուտ մարզական անհաջողություն:

Երեք օր առաջ նույն մարզադաշտում ֆուտբոլային այդ անողոքությունը կրկնվեց: Այս անգամ հավանաբար այլ նկատառումներով: Չէի ասի, թե վրացիներն առաջին խաղակեսին շոշափելի առավելություն ունեին: Ո՛չ: Նրանք պարզապես խաղում էին ազատ, անկաշկանդ, որը բնական է: Թվում է, թե խաղի ընդմիջմանը ավագ մարզիչը համաղատասխան շտկումներ կմտցնի իր սանների գործողությունների մեջ: Ոչ մի նման բան: Պարզապես ֆուտբոլիստները բացառյալ մեկ-երկու հոգու, չուզեցին խաղալ: Կամ գուցե մարզչի ցուցմունքնե՞րը բանի տեղ չդրեցին: Միեւնույն է, բոլոր դեպքերում կողմերը պետք է պատժվեն: Ուղղակի ամոթ էր լսել ու դիտել 11 հոգանոց այդ խմբակի խղճալի վիճակը: Թե իրենք իրենց մասին ինչ են մտածում, դա իրենց գործն է: Ի վերջո մենք կարող ենք նրանց կոչել իրենց արժանի անունով: Սակայն խաղալ պետության, ժողովրդի պատվի հետ նրանց ոչ ոք իրավունք չի տվել: Անցյալ տարի վրացական թերթերից մեկը լկտիությամբ գրեց, թե Հայաստան-Դանիա ֆուտբոլի հանդիպումը նման էր կատվի ու մկան խաղի: Դե պատկերացրեք, թե ինչ են գրելու այս օրերին: Ինչ է, ֆուտբոլային խայտառակությունները մեզանից անդա՞կա պետք է լինեն: Ո՞վ է ասել, թե պարտվել չի կարելի: Բայց այն, ինչ կատարվեց կիրակի օրը Վրաստանի մայրաքաղաքում, ֆուտբոլային պարտություն չէր: Դա խայտառակություն էր: Ռադիոյի եւ հեռուստատեսության մեր հարգելի մեկնաբանները դառնացած չգիտեին ի՞նչ ասել, ինչպես բացատրել կատարվածը: Վերջին երկու ընկերական խաղերում Հայաստանի հավաքականը 14 անպատասխան գնդակ է ընդունել իր դարպասը: Զարմանալի է, թե ինչու է ավագ մարզիչը կրում այդ ծանր բեռը: Այսօր ֆուտբոլը միայն մարզաձեւ չէ: Ավելի ճիշտ վաղուց արդեն մարզաձեւ չէ միայն: Երկրի ֆուտբոլի հավաքականի տեղը միջազգային դասակարգման մեջ միայն ֆուտբոլային գործոնով չի սահմանափակվում. այն առաջին հերթին ենթադրում է պետության, նրա ժողովրդի իմիջը, պատիվն ու արժանապատվությունը, որ մեզանում այդպես ոտնատակ են տալիս անպատասխանատու մարդիկ:

ՌՈՒԲԵՆ ԲԱԳԱԼՅԱՆ

Վրացական «Ռեզոնանս» թերթը իր առաջին էջում զետեղած նյութի վերնագիրը համապատասխանեցնելով Վրաստան-Հայաստան խաղի նկարի հետ, անվանել է. «Վրացիները հավալա խաղացին հայերի գլխին»:

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երեւանը» առանց խաղի դարձավ առաջատար

«Փյունիկը» առաջին անգամ զիջեց առաջին հորիզոնականը

Մարտի 31-ին երեք հանդիպումներով տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի առաջնության 16-րդ տուրը:

Աբովյանի «Կոտայքը» խոշոր 5-0 հաշվով հաղթեց մայրաքաղաքի «Արաքսիին»: Վերջին տուրերում ահեղ մրցակիցներից նվազագույն հաշիվներով կրած պարտությունները կարծես թե կայունացման միտում էին արձանագրում արաքսիրցիների խաղում, եւ ահա գրանցվեց խոշոր հաշվով նոր պարտություն:

Գորիսի «Զանգեզուրը» սեփական հարկի տակ 0-2 հաշվով պարտություն կրեց ԲՄԱ-«Ղարաբաղից»:

Գերեւանյան երկու ակումբների ՀՄՄ-ի եւ «Վանի» մրցավեճը 5-1 հաշվով շահեց վերջինը:

Հանրապետության չեմպիոն եւ գավաթակիր «Փյունիկը» զիջեց առաջին հորիզոնականը «Երեւանին», որը չեմպիոնին շրջանցեց առանց խաղի, քանզի այդ տուրում նրա մրցակիցն էր ԲԿՄԱ-ն: Այս ակումբը, ինչպես հայտնի է, լուծարվել է, եւ «Երեւանին» շնորհվեց 3-0 հաշվով տեխնիկական հաղթանակ: Չնայած այս հանգամանքին, կորցրած միավորների քանակով «Փյունիկը» մնում է պոտենցիալ առաջատար:

Բարձրագույն խումբ
Մրցաշարային աղյուսակը
ապրիլի 1-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Երեւան	16	13	1	2	44-13	40
2. Փյունիկ	14	12	2	0	43-4	38
3. Արարատ	15	11	1	3	36-14	34
4. Շիրակ	14	9	2	3	36-7	29
5. Ցեմենտ	14	8	3	3	27-15	27
6. Կոտայք	15	7	4	4	32-12	25
7. Վան	16	8	0	8	26-25	24
8. Ղարաբաղ	15	5	2	8	16-19	17
9. ՀՄՄ	16	4	1	11	16-42	13
10. Զանգեզուր	15	1	3	11	5-43	6
11. Արաքսիր	16	2	0	14	9-67	6
12. ԲԿՄԱ	16	1	1	14	10-38	4

Գարնանային խաղաշրջանը մեկնարկեց նաեւ Հայաստանի առաջնության առաջին խմբի մրցաշարում: Այստեղ եւս փոխվեց առաջատարը. «Ազնավուրը» դիրքերը զիջեց «Դվինին»: Մեկնարկային 12-րդ տուրում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Սապֆիր» (Նոր Հաճն)-«Կաեն» (Իջեւան) 4-0, «Դինամո» (Երեւան)-«Ազնավուր» (Ադյեմբերյան) 1-0, ԲՄԱ-Արայի (Էջմիածին)-«Լոռի» (Վանաձոր) 0-1, «Դվին» (Արտաշատ)-«Քասախ» (Աշտարակ) 4-1, «Լեռնագործ» (Կապան)-«Արմավիր» (Արմավիր) 4-2 եւ «Նաիրիտ» (Երեւան)-«Կումայրի» (Գյումրի) 2-2:

Մրցաշարային աղյուսակը
Ապրիլի 1-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դվին	12	9	1	2	30-11	28
2. Ազնավուր	12	8	3	1	21-7	27
3. Սապֆիր	12	8	0	4	26-14	24
4. Լոռի	12	7	3	2	17-8	24
5. Կումայրի	12	6	2	4	28-23	20
6. Արմավիր	12	4	4	4	22-19	16
7. Նաիրիտ	12	4	3	5	30-23	15
8. ԲՄԱ-Արայի	12	4	2	6	12-19	14
9. Լեռնագործ	12	3	4	5	21-19	13
10. Դինամո	12	3	2	7	12-27	11
11. Կաեն	12	1	3	8	12-36	6
12. Քասախ	12	0	3	9	11-36	3

Սահադաշտում մակաղով կանայք են

Տափօղակով հոկեյի Ռուսաստանի կանանց հավաքականը անհաջող մեկնարկեց Կանադայում անցկացվող աշխարհի առաջնությունում: Ռուս մարզուհիները 2-6 հաշվով զիջեցին չինուհիներին: Առաջին տուրի մյուս հանդիպումներում Կանադայի հավաքականը հաղթեց ավեյցարուհիներին (6-0), ամերիկուհիները պարտության մատնեցին նորվեգուհիներին (7-0), իսկ Ֆինլանդիայի մարզուհիները 5-0 հաշվով առավելության հասան ավեդ հոկեիստների նկատմամբ: Մրցումների արդյունքով լավագույն 5 թիմերը կտանան Նագանոյի օլիմպիական ուղեգրեր: Կանանց հոկեյը առաջին անգամ կներկայացվի օլիմպիական խաղերում:

ՖՐԱՆՍԻԱ-98

Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարը շարունակվում է

Կիրակի օրը հին աշխարհամասում կայացան 1998 թ. Ֆրանսիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի հերթական հանդիպումները:

Առաջին ենթախմբում Խորվաթիայի եւ Դանիայի հավաքականները Զագրեբում տեղի ունեցած մրցամարտում խաղաղ բաժանվեցին 1-1:

Ինչպես եւ սպասվում էր, իտալացիները սեփական հարկի տակ առանց առանձնակի բարդությունների հաղթեցին Մոլդովայի հավաքականին (3-0): Այս թիմերը ընդգրկված են եվրոպական երկրորդ ենթախմբում:

Ինչպես հիշում եք, հեստֆրիր պատմություն ունեն Շոտլանդիայի եւ Էստոնիայի ընտրանիների հանդիպումը: Տալլինում էստոնացիներին ուշացումով մրցավայր ժամանելու համար 0-3 հաշվով տեխնիկական պարտություն էր գրանցվել: Սակայն էստոնական կողմի բողոքարկումից հետո այն չեղյալ էր համարվել եւ Մոնակոյում կայացած վերախաղարկումը ավարտվել էր 1-1 հաշվով: Այս թիմերի երկրորդ հանդիպումը 2-0 արդյունքով հաղթանակ բերեց շոտլանդացիներին:

Անակնկալ գրանցվեց 5-րդ ենթախմբում: Կիպրոսի հավաքականը, որ վերջին տարիներին բավականին բարելավել է խաղային որակները, սեփական խաղադաշտում 1-1 հաշվով ավարտեց մրցամարտը ռուսների հետ: Իսրայելցիները հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ ուղարկեցին Լյուքսեմբուրգի հավաքականի դարպասը:

6-րդ ենթախմբում ընդգրկված Մալթայի եւ Սլովակիայի մրցավեճն ավարտվեց սլովակների հաղթանակով 2-0:

Բելգիայի հավաքականը մրցաշարում 3-րդ հաղթանակը տարավ, այս անգամ մրցակցի դաշտում 2-1 հաշվով հաղթելով Ուելսի թիմին: Հոլանդացիները 4 անպատասխան գնդակ ուղարկեցին Սան Մարինոյի հավաքականի դարպասը, տանելով չորրորդ անընդմեջ հաղթանակը:

8-րդ ենթախմբում ռումինացիների հերթական մրցակիցը Լիխտենշտայնի հավաքականն էր: 5-0 հաշիվը հոգուս Ռումինիայի հավաքականի մեկնաբանությունների կարիք չունի:

Եվ վերջապես, 9-րդ ենթախումբը: Այն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար, քանզի այստեղ մրցող թիմերի թվում է նաեւ Հայաստանի հավաքականը: Կենտրոնականը Բելֆաստում կայացած Հյուսիսային Իռլանդիա-Պորտուգալիա հանդիպումն էր, որն ավարտվեց 0-0 արդյունքով: Ուկրաինայի հավաքականը 1-0 հաշվով կարեւոր հաղթանակ տարավ ալբանացիների նկատմամբ: Այս խաղն անցկացվեց Իսպանիայի Սեւիլիա քաղաքում, քանի որ Ալբանիայում տիրող բարդ քաղաքական իրավիճակը թույլ չտվեց մրցամարտը կազմակերպել Տիրանայում:

Ասիա

Մեկնարկեց ընտրական մրցաշարի երկրորդ շրջանը 2-րդ ենթախմբում: Հիշեցնենք, որ առաջին խաղերը կայացել են Մալայզիայի մայրաքաղաք Կուալա-Լումպուրում, իսկ այժմ Սաուդյան Արաբիայում: Տանտերերը Բանգլադեշի հավաքականի նկատմամբ հաղթանակից հետո (3-0) դարձան միանձնյա առաջատար: Թայվան-Մալայզիա խաղը ընթացքում հաշիվն այդպես էլ չբացվեց:

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ս. Արաբիա	4	3	1	0	9-1	10
2. Մալայզիա	4	2	2	0	4-0	8
3. Թայվան	4	1	1	2	3-5	4
4. Բանգլադեշ	4	0	0	4	2-12	0

4-րդ խումբ. Նեպալ-Ճապոնիա՝ 0-6, Օման-Մակաո՝ 4-0: Առաջին շրջանի խաղերն անցան Օմանի Բոշեռե քաղաքում: Երկրորդ շրջանը կանցկացվի Տոկիոյում հունիսի 22-28-ը:

Ճապոնիա	3	3	0	0	17-0	9
Օման	3	2	0	1	5-1	6
Նեպալ	3	0	1	2	1-8	1
Մակաո	3	0	1	2	1-15	1

Հունիսի 22-ին՝ Նեպալ-Օման, Ճապոնիա-Մակաո:

Այսօր Եվրոպայում կկայանան հետեւյալ հանդիպումները. Հորվաթիա-Սլովենիա, Բոսնիա եւ Հերցեգովինա-Հունաստան, Լեհաստան-Իտալիա, Ադրբեջան-Ֆինլանդիա, Շոտլանդիա-Ավստրիա, Բուլղարիա-Կիպրոս, Չեխիա-Հարավսլավիա, Թուրքիա-Հոլանդիա, Լիտվա-Ռումինիա, Մակեդոնիա-Իռլանդիա, Ալբանիա-Գերմանիա, Ուկրաինա-Հս. Իռլանդիա:

ՀԱՄԱՌՈՏ

Սա Պինտուն ծեծեց Արթուր Ժորժեին

Տաճ միջադեպ տեղի ունեցավ, աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակից՝ Պորտուգալիայի հավաքականի ճամբարում: «Ֆրանսիա-98» ընտրաշրջանի Հյուսիսային Իռլանդիայի հետ հանդիպումից առաջ կազմակերպված ուսումնամարզական հավաքի ընթացքում իրեն լավագույն կողմերով չդրսեւորեց Լիսաբոնի «Սպորտինգի» 23-ամյա հարձակվող Սա Պինտուն: Պորտուգալացիների մարզիչ Արթուր Ժորժեն հեռացրեց նրան հավաքականի հավակնորդների շարքից, ինչին Սա Պինտուն բավականին յուրօրինակ արձագանքեց: Նա հայտնվեց հավաքականի մարզումային ճամբարում եւ բառացիորեն նետվեց Ժորժեի վրա: Միջադեպի ականատեսները անակնկալից շփոթված սխրված էին սկզբում բաժանել կռվողներին, իսկ այնուհետեւ սառեցնել «շիկացած» ռմբարկուի կրքերը: Այժմ Սա Պինտուին որակազրկում է սպասվում: Նույնիսկ խոսք է գնում նրան 3 տարով ֆուտբոլից հեռացնելու մասին: Նշենք, որ սա երկրորդ միջադեպն է մարզասերներից մեկի նկատմամբ էրիկ Կանտոնայի ֆունգ-ֆուի հանրահայտ հնարքից եւ Ռուի Կոշտայի գլխով հարվածից հետո, երբ կոտրվել էր ժորժ Վեայի քիթը: Ինքը՝ Պինտուն խոստովանեց, որ սխալ է վարվել: «Ես ուղղակի կորցրեցի գլուխս եւ նետվեցի մարզչի վրա, քանզի նա ինձ անվանեց պոռնիկի որդի», ասաց ֆուտբոլիստը:

Ռոնալդոն կխաղա «Տորպեդո-Լուժնիկիում»

Սենսացիոն նորություն են հայտնում ռուսական լրատվական գործակալությունները: Համաշխարհային ֆուտբոլի ծագող աստղ, 1996 թ. աշխարհի լավագույն ֆուտբոլիստ, բրազիլացի Ռոնալդոն, որն այժմ հանդես է գալիս իսպանական «Բարսելոն» ակումբում, մտադիր է մրցաշրջանի ավարտից հետո երկարաժամկետ պայմանագիր կնքել մոսկովյան «Տորպեդո-Լուժնիկի» թիմի հետ: Հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել, որ Ռոնալդոն մեծ հետաքրքրություն է դրսեւորել ռուսական ֆուտբոլի նկատմամբ, սակայն ժխտել է ռուսական մյուս թիմերի ավելի հետաքրքիր առաջարկները: Պայմանագրի, որի արժեքը առայժմ չի հրապարակվում, հիմնական երաշխիքն է «Լուժնիկի» բանկը: Հիշեցնենք, որ վերջերս «Բարսելոնը» Ռոնալդոյի համար հսկայական գումար էր վճարել՝ 32 մլն դոլար: Ըստ ամենայնի, «Տորպեդո-Լուժնիկի» ակումբի ղեկավարությունը «դարի» գործարք է կնքել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հեռանկար

ՄՈՍԿՎԱ

Ռուս-բելառուսական միություն. Ինչ է նախատեսում ղայմանագիրը

ՄՈՍԿՎԱ, 1 ԱՊՐԻԼ, ՆՏ. Ապրիլի 1-ին ժամը 16:00 տեղի է ունեցել Ռուսաստանի եւ Բելառուսի համագործակցության ղաղամենտական ժողովի նիստը: Նրան նախորդել է Համագործակցության հերթական ղաղամենտական սեսիան: Այս միջոցառումների գլխավոր թեման ապրիլի 2-ին Ռուսաստանի եւ Բելառուսի միջեւ միություն ստեղծելու մասին ղայմանագրի ստորագրումն է:

Շուրջ մեկ տարի առաջ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարել էր, որ Բորիս Ելցինի հետ մշակել է այսպես կոչված միութենական ղայմանագիր ստորագրելու գաղափարը, որը իրավաբանական հիմք է ստեղծում երկու երկրների ինտեգրացման համար:

Միություն ստեղծելու ղայմանագրի նախագիծը նախատեսում է միութենական մարմնի Բարձրագույն խորհրդի ստեղծում, որի կազմի մեջ են մտնելու երկու երկրների նախագահները, վարչապետները եւ իշխանության օրենսդիր ճյուղերի ղեկավարները: Նմանապես ստեղծվելու է կառավարություն այսպես կոչված Գործադիր կոմիտե, որը ղեկ է իրականացնի Բարձրագույն խորհրդի բոլոր որոշումները: Միության մեջ հնարավորություն է ընձեռվում ընտրել եւ ընտրվել տեղական իշխանության մարմիններում, ինչպես նաեւ սեփականություն ունենալ Միության ամբողջ տարածքում: Ղայմանագրի կարեւոր մասերից մեկը Բելառուսի եւ Ռուսաստանի ղաղամենտական ժողովի լիազորությունների ընդլայնումն է մինչեւ Միության այդ բարձրագույն օրենսդիր մարմնի ուղղակի ընտրությունների անցկացումը:

ՌՈՒՍԵՐ-ԱՐՄԵՆԻԱՆՆԵՐ

Դատելով ըստ ամենի, ներկայումս ռուս քաղաքական գործիչների շարքում Բելառուսի հետ ինտեգրացման հարցով հակառակորդներ չկան, սակայն ասիճանական, էվոլյուցիոն մերձեցման եւ կտրուկ մերձեցման կողմնակիցների միջեւ վիճաբանություններ շարունակվում են:

Բորիս Նեմցովը Գրիգորի Յավլինսկու հետ հանդիպումից հետո դեմ է արտահայտվել շտապողականությանը, որպեսզի ոչ ռուս, ոչ բելառուս ժողովուրդը չտուժի քաղաքական կամ սոցիալական իմաստով: Պայմանագրի տեքստի վերջին խմբագրումը հիացմունք չի առաջացնում նաեւ շուտափույթ միավորման կողմնակիցների մեջ: Նախնական տարբերակի հեղինակներից մեկը Սերգեյ Բաբուրինը պնդում է, որ փաստաթղթից ոչինչ չի մնացել, իսկ արմատական փոփոխություններ ապրիլի 2-ից հետո չեն լինի:

Պայմանագրի հրապարակված տեքստը, փաստորեն, առաջարկում է ռուս-բելառուսական համագործակցության մասին հին, ընդունված փաստաթղթի նորացված տարբերակ: Փոփոխության են ենթարկվելու կառավարման մարմինները, գուցե ի հայտ գան միութենական մարմիններ եւ հավանաբար ընդունվի խորհրդանշական քաղաքացիություն:

Պաղեստինցի ահաբեկիչները Իսրայելի գործակալնե՞ր

1 ԱՊՐԻԼ, RFI: Պահպանվում է լարված իրավիճակը պաղեստինցիների եւ իսրայելցիների միջեւ: Այսօր առավոտյան 2 պաղեստինցիներ սպանվեցին ռումբերից, որոնք պատրաստվում էին տեղադրել Գազայի հատվածի 2 հրեական բնակավայրերը սպասարկող իսրայելական դողոցական ավտոբուսների մեջ: Պայթյունի հետեւանքով վիրավորվեց 5 պաղեստինցի: Իսրայելցիներից ոչ ոք չտուժեց: Բացի այդ, Հորդանանի արեւմտյան ափին շարունակվում են բախումները երիտասարդ պաղեստինցիների եւ իսրայելցի զինվորների միջեւ: Վերջիններս այսօր կրակ են բացել ավտոմեքենայի վրա, որում 2 պաղեստինցի կար: Նրանցից մեկը սպանվել է: Բախումներ են տեղի ունեցել նաեւ Նաբլուսում, որտեղ պաղեստինցի մի ոստիկան է սպանվել: Պաղեստինյան «Համաս» ծայրահեղական կազմակերպության ներկայացուցիչը հայտարարեց, թե Գազայի հատվածի ահաբեկչական գործողությունները ոչ թե «Համասի», այլ իսրայելական հատուկ ծառայությունների եւ նրանց պաղեստինցի գործակալների ձեռքի գործն են, որոնք փորձում են «Համասին» կռվացնել ու բռնամացնել Պաղեստինի իշխանությունների հետ: Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքն այսօր խիստ քննադատության ենթարկեց Իսրայելի վարչապետ Նաթանյահուին, որին մեղադրեց խաղաղ գործընթացը տորպեդահարելու մեջ: Իսկ Նաթանյահուն Եգիպտոսին մեղադրեց հակաիսրայելական գրգռարշական արշավ վարելու մեջ:

Իսպանիայում գնացքների վթարներ

1 ԱՊՐԻԼ, RFI, BBC: Իսպանիայում տեղի ունեցան 2 լուրջ երկաթուղային վթարներ: Առաջինը կատարվեց գիշերը, Բարսելոնի մոտակայքում ռելսերից դուրս եկավ Բարսելոն-Իրան երթուղով ընթացող մարդատար գնացքը, որի հետեւանքով զոհվեցին 19 եւ վիրավորվեցին ու վնասվածքներ ստացան 89 ուղեւորներ: Դա վերջին 20 տարվա ընթացքում Իսպանիայում տեղի ունեցած ամենախոշոր երկաթուղային վթարն էր: Երկաթուղու ներկայացուցչի խոսքերով, ըստ երեւույթին գնացքը շատից ավելի արագ է ընթացել: Երկրորդ վթարը տեղի ունեցավ 8 ժամ անց, Մադրիդի շրջակայքում, այսօր առավոտյան: Զոհվեցին 2, վիրավորվեցին 16 ուղեւորներ: Այդ գնացքը եւս դուրս էր եկել ռելսերից:

ՌՈՒՍԵՐ-ԱՐՄԵՆԻԱՆՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏ

Գերմանիայում հրկիզվել է թուրքի տուն

1 ԱՊՐԻԼ, BBC: Գերմանական Կրեֆլեդ քաղաքում բնակարանի հրկիզման հետեւանքով զոհվեցին մի թուրք կին եւ նրա 2 երեխաները: Ինչպես հաղորդեց ոստիկանությունը, մայրն ու դուստրը զոհվեցին, երբ փորձելով փրկվել հրդեհից դուրս նետվեցին պատուհանից, իսկ տանը մնացած դեռահաս որդին խեղդամահ եղավ: Մյուս 2 դուստրերը լուրջ վնասվածքներ ստացան: Քննիչը հայտնեց, որ հրկիզված բնակարանի դռների տակ հայտնաբերվել է վառելանյութով լցված մի փաթեթ: Սակայն փաստեր չկան, թե հրկիզումը կատարվել է ռասիստական մղումներով:

Թուրքմենստանի նավթը՝ Աֆղանստանով

1 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Աֆղանստանի «Թալիբան» մահմեդական շարժումը բանակցություններ է սկսել ամերիկյան «Յունիքալ» եւ արգենտինյան «Բրիդաս» նավթային ընկերությունների հետ՝ նավթի արտահանման հարցի շուրջ: 2 միլիարդ 500 միլիոն դոլարի համարժեք այդ ծրագրով նախատեսվում է Թուրքմենստանի նավթն արտահանել Աֆղանստանի եւ Պակիստանի տարածքներով: «Թալիբանի» ղեկավարները հետաքրքրված են նաեւ Աֆղանստանի տարածքում նավթի եւ գազի հետազոտություններ անցկացնելու ծրագրով:

Բարձրակարգ մասնագետը
ՊԱՐԱՊՈՒՄ Է
անգլերեն: Վարձավճարը մաշելի:
Հեռ.՝ 567418

Մայրության, կանանց եւ գեղեցկության տոնի լավագույն նվերները
«ԲՐԱԲԻՈՆԻ»
հրաշագեղ ծաղկեփնջերն են՝ սիրո փառատոնի հրավիրատոմսերով:
ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ ԾԱՂԿԻ ԳՆԵՐԸ
«ԲՐԱԲԻՈՆ ՖԼՈՐԱ ՍԵՐՎԻՍՈՒՄ»

ՎԱՐԴ	500-900
ՔՐԻԶԱՆԹԵՄ	600-800
ՀԻՐԻԿ	500
ԳԵՐԲԵՐԱ	400-600
ԽՈԼՈՐՋ	800

Կլինեն նաեւ անցուրիում, շուշան, դրախտի թռչուն եւ այլ ծաղիկներ:

ՄՐՑՈՒՅԹ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժնի երեւանյան գրասենյակը հայտարարում է մամուլի բնագավառում տարեկան առաջին մրցույթ, նվիրված մայիսի 3-ին նշվող Մամուլի ազատության միջազգային օրվան: Մրցանակը տրվելու է Հայաստանում մամուլի ազատության գաղափարը արտահայտող լավագույն հոդվածի համար: Հեռարձակող լրատվական միջոցների բնագավառում նմանատիպ մրցանակ կտրվի ս. թ. նոյեմբերի 21-ին, Հեռուստատեսության համաշխարհային օրը, որի մասին կհայտնենք ավելի ուշ:

1997 թ. մրցույթը ընթանալու է երեք կարգով.

1. Մարդն ու հասարակությունը թեմայով հասարակական հնչողություն ունեցող հոդված
2. Լրագրողական հետաքննություն ոճի հոդված
3. Հայաստանը տնտեսական անցումային փուլում թեմայով հոդված:

Մեկ հազար դոլար հատուկ մրցանակ լավագույն հոդվածի համար սահմանել է ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժինը:

Լրագրողները կարող են մինչեւ 1997 թ. ապրիլի 15-ը ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժին ներկայացնել մեկից երեք հոդված, որոնք լույս են տեսել 1996 թ. ապրիլի 15-ից հետո:

1997 թ. մարտի 17-ին, ժամը 10:00 ՄԱԿ-ի գրադարանում հրավիրվում է այս մրցակցությանը նվիրված կոնֆերանս: Զանգահարել ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության բաժին

56-02-12 հեռախոսահամարով:

Հայաստանի ամերիկյան համալսարան

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
Ավարտական վկայագիր շնորհող ծրագիր
1997-1998 թթ.

Հայաստանի ամերիկյան համալսարանն ընդունում է դիմումներ «Անգլերենի դասավանդումը որպես օտար լեզու» ծրագրի համար, որն ավարտելուց հետո կտրվի վկայագիր: Դիմորդները պետք է ունենան համապատասխան բարձրագույն կրթություն անգլերեն լեզու, ժամանակակից լեզուներ կամ լեզվաբանություն մասնագիտությունների գծով եւ ներկայումս դասավանդեն դպրոցում կամ ԲՈՒՀ-ում:

Ընդունվելու համար անհրաժեշտ պայմաններից է ընդհանուր գնահատականների 4.0 եւ բարձր միջին ցուցանիշը:

Դիմորդները պետք է գերազանց տիրապետեն անգլերեն լեզվին: Պահանջվում է ունենալ վերջերս հանձնած TOEFL քննության 575 կամ բարձր միավորներ, կամ 1997 թ. մայիսի 6-ին ՀԱՀ-ում կազմակերպվող անգլերեն լեզվի քննությունից ստանալ բարձր միավորներ:

Դիմորդները պետք է ներկայացնեն՝

1. Դիպլոմ եւ ներդիր իրենց պետքերներով,
2. երեք երաշխավորագիր-նամակ,
3. Լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման համար կանխավճարը դրամով կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք գումար, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: Փաստաթղթերի հանձնման վերջին ժամկետը սույն թվականի մայիսի 2-ն է:

Ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ պայմանագրեն ավարտելուց հետո 18 ամիս Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պայմանագիր:

Վերջնական ընդունելությունը կկատարվի դիմորդների նախորդ ուսումնական տվյալների եւ անգլերեն լեզվի քննության արդյունքների հիման վրա: Ծրագրի տեւողությունը երեք ուսումնական քառորդ է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Հասցե՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 1 հարկ, 19 սենյակ, հեռ. 27-16-29:

ՀԱՀ-ը ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրականություն չի ճանաչում

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարաններ 5 հարկանի քարե շենքի 1-ին եւ 2-րդ (ավտոնկակով) հարկերում, Դեմիրճյան 17 շենք:
Հեռ.՝ 581841, 523056, 523884

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 5-րդ հարկում, 70/50 քմ, ավտոնկակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
Հեռախոս՝ 22-42-68

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոնկակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի: Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՍԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ՝ 589167, 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 549 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 1. 04. 1997 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@